26ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 6997 — 10 ՅՈՒՆՈՒԱՐ 1909 — ՇԱԲԱԹ — 1 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1327 — 23 Janvier 1909 — 26me année — N 6997

"ԱՐԵՒԵԼՔ„
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կ. Պոլսոյ համար տարեկան	80 Ղ.
» » վեցամսեայ	45 »
Դաւառներու համար տարեկան	108 »
» » վեցամսեայ	60 »
Օտար երկիրներու համար տարեկան	35 Ֆր.
» » վեցամսեայ	20 »

Թղթատարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

آره‌ولك
ارمنیجه یومی و سیاسی غزته
صاحب امتیازی قره‌کین بویاجیان
درعلیه قلطه

AREVELK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

10 PARAS

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեդրոնականը.—Պոլսոյ առուտրը.—Հայն ու երկու սատանաները.— Ճարպիկութիւն մը:

Կեդրոնական վարժարանի—զոր ուրիշ տեղ իբրաւամբ կեդրոնական վառարան անուանած ենք—նախկին մեծութիւնը և աղգին մատուցած ծառայութիւնները ըմբռնել կարենալու համար հարկ է որ անոր պատմութիւնը գրուի և կարդացուի, բան մը որ դեռ չէ եղած և ճամարանք մը ալ չկայ: Ելլել աղգին այդ սիրելի հաստատութիւնը իջեցնել միջակ կամ անուանական բարձրութեան մը, և առ՝ սա աղատութեան օրերուն, սիալներու և անփութութեանց մեծագոյնը պիտի ըլլար, եթէ չըսենք չարիք մը:

Ո՞վ կ'ուրանայ որ աղգը այսօր առաւել քան երբեք պէտք ունի լաւ պատրաստուած անհատներու, հմտութեամբ, զգացումով և բարոյականով ձուլուած գողպատէ Հայերու, մտքի ու սրտի պաշարով հարուստ պարկեշտ քաղաքացիներու. և ասի կրկնակի պատճառներով. առաջին՝ վասն զի, ինչպէս ըսինք, աղգը պէ՛տք ունի անոնց. երկրորդ՝ որովհետեւ Կեդրոնականին պարտականութիւնն է իբր տիպար և օրինակ հանդիսանալ մեր միւս բոլոր կրթական հաստատութիւններուն. մէկ խօսքով Կեդրոնականը պէտք է մատուցանէ այն ծառայութիւնը, ինչ որ Բէմպրիճն ու Օքսֆորդը՝ Անգլիոյ: Մեր մեծ մարդիկը անտեղ պէտք է ձուլուին. ուժեղ ձիրքերով և ճշմարիտ վստահելի արժանիքներով օժտուած, աղգին ասկէց եաքը ա՛լ չատ դժուարին ճակատագիրը վարելու:

Տեղն է որ երկու բառով բացատրութիւն տանք մեր ըստ դժուարին բառերուն:—Բռնակալութեան տակ, անազատ անհատը կամ ցեղը երբեք չեն ունեցած և չեն կրնար ունենալ պատասխանատուութիւն, պարտաւորուած ըլլալով միայն տրուած հրամաններ, արձակուած վճիռներ կատարելու, մինչեւ որ օր մըն ալ կը վարժուին պարզ մեքենաներու դերը կատարելու. ահա ասոնց է պատճառը որ մեր ժողովուրդը այս աղատութեան չըբնջանին՝ անչարժութիւն մը, թուլութիւն մը, անճարակութիւն մը ցոյց կուտայ, ինչ որ եթէ երկար տեւէ, եթէ չսթափի՝ կրնայ մահացու դառնալ իր նկարագրին, հին երաղներուն ու նոյն իսկ ապագային: Ահա այդ սարկութեան վարժուած հոգեկան սմքած վիճակն է որ դեռ կը ծանրանայ իր ակնակապիճներուն վրայ ու անկարող՝ տեսնելու ծագած լոյսը, կատարուած փոփոխութիւնը, կը դանդաղի օգտուելու մէջ և թերահաւատ է ինք իր ուժերուն վրայ:

Ուշաբերելու ժամանակ է: Ժամանակ է որ յիշենք մեր երեկուան հառաջնորները, մեր առջի օրուան ծրագիրները, մեր անցեալ տարուան ձգտումները. երբ կ'ըսէինք.— «Ա՛խ, եթէ միայն Ազատութիւն ըլլար...»: Ամենեւին չենք մեղադրեր ո՛չ աղգը ոչ ալ անհատը. այս չըջանը պէտք էր որ դար, այս սահմանումի, շուարանքի, անաարբերութեան չըջանը, այս հիասթափումի չըջանը. բայց հիմա ալ այդ կիսամրափ, կիսակենդան, բանդագուշանքի տիրմին մէջ մնալ անպատմելի չարիք մը պիտի ըլլար. վերակենդանանալու, վերակազմուելու ժամանակ է թէ՛ իբրեւ աղգ, թէ՛ իբր անհատ: Ապա թէ ոչ ինչպէս պիտի կարենանք օգտակար ըլլալ կայսրութեան, իբր զայն կազմող տարրերուն կարեւորագոյններէն մէկը. ինչպէս պիտի պահպանենք մեր աղգային գոյութիւնը...

Հիմա կը դառնամ Կեդրոնականին:

Իմ կարծիքով, առանց այլեւս ժամանակ ծախսելու պէտք է հրաւիրել Պ. Զօպանեանը որ ճշմարիտ ուսանող մըն է և գիտէ սորվիլ ու սորվեցնել. Հրանդ՝ որ գիտէ զգալ ու զգացնել. Պոյաճեան և Եուսուֆեան՝ որ բերանաբաց մտիկ կ'ընլուին անմանձրայթ. Յովհաննէսեանի պէս մէկը որ աշխատիլ ու աշխատցնել գիտնայ. Պ. Բիլա, որուն հանդէպ աղգովին երախտապարտութիւններ ունինք: Եւ ինչո՞ւ չհրաւիրուի Մոստիչեան որուն միակ թերութիւնն է իր յոռետեսութիւնը, ինչոր անչուշտ պիտի դարմանուի երբ վերստին չրջապատուած գտնէ զինքը իր հին պաշտօնակիցներով հայ կեանքի եռուզեռումովը տաք Պոլսոյ կեդրոնին մէջ:

Մեր գուրգուրանքն այնքան մեծ էր այդ վարժարանին վրայ որ Անգլիա հասնելնուս իսկ զացինք հայասէր Պ. Ճէյմս Ռրայսին, նախ Մորդրդարան ապա՝ իր տունը, խնդրելու համար որ հաճի նախագահել մեր կազմելու ձեռնարկած այն մարմինին որուն նպատակը պիտի ըլլար 30—40,000 ոսկի հանգանակելով Կեդրոնականին անունով պանքան դնել, զայն յարուցանելով — այն տեղն մեռած էր — աւելի բարձր հաստատութեան մը վերածելու համար: Կրէսէի պատեղագմը կը սկսէր հետեւեալ օրն իսկ և ամէն ծրագիր ջուրը կ'իյնար մինչեւ 1901—2 երբ դարձեալ աւելի դրական յաջողութիւն մը ձեռք կը բերէինք, որ սակայն, աւաղ, երիտասարդ հայ դրուժանի մը égoïste էնթրիկներուն զոհ գնաց, և Կեդրոնականը կորսնցուց տարեկան 250 ոսկիի գրեթէ ապահովուած եկամուտ մը: Թէպէտև մեր նպատակէն դուրս էր պատմութիւն գրել, բայց հարկ դատցինք այսքան մը յայտնութիւններ ընել, ապացուցանելու համար Կեդրոնականին ստացած անագին կարեւորութիւնը:

Այսօրուան Կեդրոնականը պիտի տայ այնպիսի ուսանողներ որ բանտարկութեան մը պարագային իբր կարեւոր ձերբակալեալներ նկատուին, որ փութան նստարաններու բեկորներով ինքնապաշտպանութեան դիմել, փոխանակ «լալու»... ինչպէս այլուր:

Կեդրոնականէն մենք կը սպասենք երեսփոխանցուներ, և պէտք է որ ան դրուի արդի վիճակէն շատ վեր բարձրութեան մը վրայ: Երկաթէ Պատրիարք և այսօրուան Կեդրոնականը խոտոր կը հանմտատին իրարու. մէկը խստ վեր է միւսը բաւական վար:

Կեդրոնականը պէտք է մեզի տայ ճէնդլմէններ. գիտէ՞ք ինչ է ճէնդլմէնը. ֆրանսացի բրօֆէսօր մը այսպէս կը բացատրէր անցեալ օր.— մարդ մը՝ որ ուսումն ստացած է անգլիական հասարակական բարձրագոյն վարժարաններում:

Եւ մեր աղգը անհրաժեշտ է որ ունենայ այդ կարգի գոնէ մէկ վարժարան: Կամ ամէն բան կամ ոչինչ այս աղատութեան օրերուն:

* * *

1453ին Պոլիս կ'առնուէր, կամ այնպէս կը կարծուէր: 1492ին Նոր Աշխարհը կը գտնուէր: Եւ ի՞նչ ապշեցնող հանդիպում: Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ կործանեց նա քրիստոնէական տաճարները, որպէս զի նրանց տեղում ատրուշաններ հիմնէ: Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ այժմ այրում էր, ոչնչացնում էր նա քրիստոնէական մատեանները, որպէս զի, նրանց փոխարէն, հայերի ձեռքը տար պարսից կրօնական գրքերը, որ հայերը պարսկերէն կարդային, պարսկերէն աղօթէին և պարսից լեզուով արտայայտէին իրանց զգացմունքները...

Սամուէլը գիտէր այդ բոլոր նախասահմանեալ մեքենայութիւնները, իսկ այժմ իւր աչքերով տեսնում էր այն անողորմ գործողութիւնները, որ պիտի հեշտացնէին պարսից արքայից արքայի նենգաւոր նպատակները իրագործելու: Դէպի գերութիւն էին վարում եկեղեցականներն, որ անաէր թողնեն թէ՛ եկեղեցին և թէ՛ նրա հօտը, որ գլխաւորութեամբ կարողանան կեղծել քրիստոնեայ ժողովուրդը: Այրում էր Սամուէլը այլ եւս համբերել չը կարողացաւ, դարձաւ դէպի ծերունին այս խօսքերով.

—Սիրելի Արքակ, ինչ որ անելու է, պէտք է անել... ժամանակը թանգ է մեզ համար... Իջեցրու վրանի վարագոյրները և ինձ միայնակ թող այստեղ: Ով որ հարցնելու լինի, կասես գլուխը ցաւում է, քնած է: Իսկ մի ժամից յետոյ կուզարկես ինձ մօտ Մալխասին:

Ծերունին տխուր մտախոհութեան մէջ վեր կացաւ, վրանի վարագոյրները ցած թողեց և խկոյն դուրս գնաց: Սամուէլը մի քանի րոպէ մնաց լուռ տատանման մէջ: Նրա քնքուշ զգացմունքները, նրա վերին ատիճանի բարի սիրտը՝ բռնանում էին խելքի և սառն մտածութեան վրայ: Մի քանի անգամ վեր առաց մագաղաթի թերթը, կամենում էր գրել, բայց դարձեալ ցած դրեց: Ձեռքը տարաւ դէպի ճակատը, որ բորբոքում էր տենդային կրակով: Աչխատում էր ամփոփել իւր յիշողութիւնները, աշխատում էր վանել ա՛յն մռայլը, ա՛յն անբացատրելի մթութիւնը, որ այդ բոպէում պատել էին նրա միտքը: Նա վեր կացաւ, փոքր ինչ յետ քաշեց վարագոյրի մի եզրը, որ լոյս լինի: Նրատեց, կրկին առաց մագաղաթեայ թերթը և գրիչը: Սկսեց դանդաղ ձեռքով գրել: Նա գրում էր, և ամեն մի բառի վրայ բոպէներով մտածում էր: Այդ նամակի ճշտութիւնից էր կախուած՝ անվրէպ կերպով նպատակին հասցնել այն սրտագին խորհուրդը, որ վազուց արդէն խմբվում էր նրա գլխում: Մի սխալ քայլ կարող էր ամեն ինչ ոչնչացնել: Նրա խորհուրդը որքան մեծ էր, նոյնքան և վտանգաւոր էր: Եւ այդ իսկ խորհրդից էր կախուած թէ՛ նրա խղճի հանգստութիւնը, և թէ՛ նրա հայրենիքի բախտը: Նա գրեց առաջին նամակը և սկսեց երկրորդը:

Նամակները արդէն վերջացրել էր, երբ ներս մտաւ Մալխասը: Երիտասարդը դարձաւ դէպի նա, հարցնելով.

—Դու ծանօթ ես Արաքսի աջակողմեան ափերի մօտ տարածուող ճանապարհների հետ:

—Ծանօթ եմ,—պատասխանեց մշտապատրաստ Փայակը:—Բայց մի քանի ճանապարհներ կան, որի՞ մասին է հարցնում իմ աէրը:

—Այն ճանապարհի մասին, որ ուղիղ գետի եզերքովն է գնում և հասնում է մինչեւ Աստղապատի անցքը:

—Գիտեմ: Դա ամենավատ ճանապարհն է և վտանգաւոր: Երբեմն իջնում է գետի ափերի մօտ, երբեմն ոլորվում է ապառաժների լանջայ վրայով, իսկ երբեմն անցնում է նեղ կիրճերի միջով, եւ երբեք չէ բաժանվում գետի ընթացքից:

—Այդ իսկ ճանապարհի մասին է իմ խօսքը: Ա՛ռ այս նամակները: Նախ կը բռնես դէպի Երնջակայ տանող ճանապարհը: Այնտեղից, Երնջակայ գետակի ընթացքով, կը մտնես մի նեղ ձոր, որ տանում է դէպի Ջուղայի կամուրջը: Այդ կամուրջով կանցնես Արաքսը: Յետոյ կը գնաս նոյն ոլոր-մոլոր ճանապարհով, որի մասին խօսեցինք, և որը Արաքսի աջակողմեան ափերով տանում է դէպի Նախավկայի վանքը, որից շատ հեռու չէ Աստղապատի անցքը, ուր կամուրջ չը կայ, և մարդիկ տկանաւերով են անցնում Արաքսը:

Փայակը ուրախութեամբ առաց նամակները, հարցնելով.

—Իմ աէրը հէնց այս բոպէիս է հրամայում ճանապարհ ընկնել:

—Ոչ: Դու կը սպասես մինչեւ երեկոյ: Յետոյ երբ գիշերային խաւարը բոլորովին կը պատէ, այնպէս զգուշութեամբ դուրս կը գաս բանակից, որ քեզ ոչ ոք չը տեսնէ:

—Սատանան անգամ չի՛ տեսնի,—պատասխանեց Փայակը ինքնավստահութեամբ:—Բայց ո՞ւր տանել այդ նամակները և ո՞ւմը յանձնել:

—Նախավկայի վանքի մօտ, Մաղաթայ լեռան ստորոտում, ժայռի վրայ նստած կը գտնես մի կրօնաւոր: Նամակներից մէկը կը յանձնես Նրան:

—Ո՞ր նամակը: Իմ տիրոջ ծառան կարդալ չը գիտէ:

—Այն նամակը, որ կապած է կարմիր դերձանով:

—Իսկ եթէ կրօնաւորին ժայռի վրայ նստած չը գտնե՞մ:

—Անպատճառ կը գտնես: Նա այնտեղ, մի սգաւոր ոգի նման, նստած է իւր վանքի մոխրների վրայ, ա՛յն հրաշալի վանքի, որ աւերակ դարձրեց Մեռուժանը, և անմխիթար կերպով ողբում է նրա ցաւալի կործանումը:

—Յետոյ ի՞նչ պիտի անէ իմ տիրոջ ծառան:

—Յետոյ կը թողնես վանքը և կը շարունակես՝ ճանապարհը դէպի Խրամ քաղաք: Կը գնաս, կը գնաս, մինչեւ քո առջեւ կը յայտնուի մի ծածկուած պատգարակ, որը, դագաղակիր պատգարակի նման, պատած կը լինի սգաւորի սեւ պատառներով: Նրան ուղեկցում են լեռնականների մի քանի զինուած գունդեր: Այդ միւս նամակը, որ կապած է կանանչ դերձանով, կը յանձնես պատգարակի մէջ գտնուած անձնաւորութեանը:

—Իմ տիրոջ ծառան չի՞ պիտի գիտենայ, թէ՛ ո՛վ է նա:

—Ոչ ոք չը գիտէ, թէ ով է նա, բացի իւր զինեալ ուղեկիցներից, որոնք նրա անձնաւորութիւնը պահում են իբրեւ խորին գաղտնիք: Քեզ համար ես մի առանձին պէտք չը կայ գիտենալու, թէ ով է նա:

—Նամակը յանձնելուց յետոյ, ի՞նչ պիտի անէ իմ տիրոջ ծառան:

—Կը շարունակէ իւր ճանապարհը: Քեզ կը հանդիպի Ռշտունեաց Գարեգին իշխանը իւր զինեալ լեռնականներով: Նրան իմ կողմից կասես մի բառ միայն՝ «շտապել»:

—Իսկ եթէ ուրիշ բաներ ևս հարցնելու լինի:

—Ինչ որ գիտես, բոլորը կը պատմես: Դու, կարծեմ, բաւական ծանօթացած պէտք է լինես պարսից բանակի այժմեան դրութեան հետ:

—Իմ տիրոջ ծառան ամեն ինչ տեղեկացել է. գիտէ պարսիկ զօրքերի թիւը, գիտէ՝ ո՛րքանը ձիաւորներ են, ո՛րքանը հետեւակներ են, գիտէ քանի՛ գունդերի են բաժանուած և իւրաքանչիւր գունդին ո՛վ է հրամայում:

(Շարունակելի)

ԱՌԱՍԱՓԻԿ ԱՆՏՈՒՏ ՄԸՆ ԱԼ

Երես առած գրող մը (այս բառը ռուսահայերուն պէս արտասանելով), քանի մը օրեր առաջ, այս էջերուն մէջ իսկ Արտաչէս Յարութիւնեանի հեղինակածին նմանող ոտանաւորս առաջ բերելով կը յայտարարէր թէ բանագողութիւն բրած եմ անկէ:

«Պարտաճեան, կ'ըսէր ան, երբեմն Յարութիւնեանի սիրերգակ քերթողութիւններէն տղայամտութեամբ կտորներ շորթած է լուսնկայ գիշերով?

Թեզի համար, գիտե՞ս, աղջոր,
Քանի երգեր գրեցի,
Հոն երգելով քու բիւրաւոր
Շնորհները դ՝ կանացի:

Urs. Յարութիւնեան

Թեզի համար ի՞նչ երգեր
Ինչ գեղջուներ հիւսեցի,
Նուրբ բառերով ոսկեղեն,
Դաշնակութեամբ կանացի:

Մեր. Պարտաճեան»

Կրնաք ենթադրել թէ ի՞նչ տրամադրութեան տակ գրի առնուած է այս ծիծաղելի և վրան բաց տխմարութիւնը, երբ այդերենիդ անգամ մը սեւեռէք լուսնկայ գիշերով բառերուն վրայ որոնք չեմ գիտեր ինչո՞ւ լծուած են նախորդ նախադասութեան, չեմ գիտեր ի՞նչ ըսել կ'ուզեն:

Ուրիշ առիթով մը դարձեալ երկու տուն ոտանաւոր առաջ բերելով նոյն մարդը ըսած էր թէ բանագողութիւն եմ բրած: Գրած էի.

Ամբիծ լուսանիւթ ըստինքի մը պէս,
Լուսինը վերէն կախուեր է նորէն,
Անպատկառօրէն պչրելով կարտես,
Ամպէ քօրսաժին թոյլ բացուած քներէն:

Շենասի գրած է եղեր՝

Իր դէմքը սեւ մաղերուն մէջէն կը յիշեցնէ
Լուսինը, որ սեւ ամպերէն դուրս կուգայ:

Չեմ գիտեր թէ այս երկու կտորներուն ո՞ր մասը իրարու կը նմանի, ո՞ր մասը միւսը կը յիշեցնէ: Բայց գիտնալու է թէ դիմացինս խելքը գլուխը մարդ չէ:

Զիս քննադատողներ շատ են գտնուած. անոնք զիս զարմացուցած են. այս վերջինը ինձի խնդուք կը պատճառէ:

Պարոնին մէկը անգամ մը զիս կը քննադատէր, որովհետեւ տաղերս «սիրուն» կը դտնէր, «ազնուական», «անկեղծ», «անճիգ», «առանց երկունքի արտադրուած», «հաճելի ու դիւրմբռնելի», «զարիպեան» կը գտնէր, «մանաւանդ բարիզեան»(*), միշտ այդ լօչտակին բացատրութիւններովը:

Մտածելու է ուրեմն որ ուրիշ ինչ կարեւոր է բանաստեղծութիւն մը անքննադատելի դարձնելու համար: Բան մըն է կ'ըսեն. ըսածնուն լուրջ գիտակցութիւնը չունին. գրականութեան հետեւակներն են անոնք, որոնք չիմանալով, երես առնելով՝ ասոր անոր չհաւնելուն մէջ կը փնտռեն իրենց մնանկացած համբաւը:

Վերջին քննադատս ինչպէս տեսաք ուրիշ մեծ յայտնութիւն մը կ'ընէ: Բանագողութիւնս գտած է: Եւ ի՞նչ բանագողութիւն, Աստուա՛ծ: Դիւա մը բլար գտնէ, գրական չնչող նախադասութիւն մը բլար գտնէ. ի՞նչ կ'ուզէ այդ քանի մը բառերուն նմանութիւններէն: Բառ մը, յանգ մը, ածական մը կը բաւեն մեր քննադատներուն? խելապատակին մէջ բանագողութեան գաղափարը ծնցնելու համար: Անոնք կը նմանին Տէյգիլս Պրուիզաքի, որ իր ամբողջ կեանքը կ'անցընէր Դասպին, Պօսլէի և Պուալոյի գործերուն մէջէն բանագողութիւններ երեւան հանելով: Իր մեթոդը սքանչելի էր: Երբ նախորդ սերունդին պատկանող գրագէտի մը մէկ բառը կրկնուած բլար Պօսլէի մէջ, այս վերջինին խօսքը բանագողութիւն կ'բլար: Պօսլէ ըսած է. Alger, tes maisons ne sont plus qu'un amas de pierres: Պուիզաքի մտքը վեր կ'առնէր ու կը գուչէր. «Ասիկա բանագողութիւն մըն է Դոռնէյլէն»: Ինչո՞ւ, որովհետեւ Դոռնէյլ իրմէ առաջ ըսած էր Avoir mal soutenu l'honneur de ma maison: Ահա ա՛յս է Պուիզաքին հռչակաւոր մեթոդը, որ թոյլ կուտայ մեզի կարծելու թէ, բացի Ադամէն ո՛չ մէկը խօսք մը ըրած է որ բանագողութիւն չբլայ:

Վերյուշումով գրուած տեղեր կան Դոռնէյլի, լը Պէլէրի, լը Գօնթի տը Լիլի, Լաֆօնթէնի և շատ մը ուրիշ հեղինակներու գործին մէջ: Վերիշումը՝ բանագողութենէն փարախներով հեռու է: Անիկա արդարանալի կողմեր ունի: Հոգեբանական երեւոյթ մըն է: Միեւնոյն տարուան մէջ հրատարակուած են Յարութիւնեանի և իմ ոտանաւորներս. միայն աղէկ չեմ յիշեր որ ե՞ս առաջ գրած եմ թէ կարօն:

Անհանդուրժելի, ապիկար կարգ մը գրողներ ունինք, ինքզինքնին դժուարըմբռնելի, խրթին, հիւանդ գրականութեան տուած միմոներ, որոնք բնականաբար բան մը չեն հասկնար առողջ գրականութենէն: Կը զարմանամ որ ինչպէ՞ս կը հանի Յարութիւնեանի թեթեւ անարուեստ բայց առողջ բանաստեղծութեան՝ ա՛յն գրողը՝ որ մինչեւ այսօր կուրօրէն կը պաշտէր ցաւագար դէմքեր միայն, որովհետեւ իր համախոհները կը սիրէին զանոնք, — նմանելով պատմական Թիթանիային որ սիրահարուած էր Պոթթոմի, իշագլուխ այդ մարդուն, առնոր համար որ Օպէրոն անոր աչքերուն վրայ «մոգական ծաղիկին հիւթը կաթեցուցած էր» և այսպէս չէր տեսներ դիմացինին հրէշութիւնը և կամ նմանելով Ֆաւաթի՝ որ իր մարմնին մէջ ունեցած

(*) Բիլզանդիոն, 1908, թիւ 3464, 3470 և 3476, խորհրդապաշտ հանճարներու երկրորդութենէն ստորագրուած:

ԼՈՒՍՆԿԱՅԻ

Բաղերը չո՛ւտ լքեցին
Լճակը արծաթէ,
Վտակ մը հոն առանձին
Արցունքնե՛ր կը յորդէ:

Լճակը հին ագաւոր
Վտակին հետ կ'ուռի,
Ցուզմունքն իր խորհրդաւոր
Կարօ՞տն է անցեալի:

Թէ ծխանք մ'է յուզմունքում
Լճակը շղարշային,
Կոծող վտակն անոր մօտ
Այլ մրն է անմեկին:

Լճակը ծուփ ծուփ կուլայ
Պլուած՝ վտակին,
Կանչելով իր հնօրեայ
Բաղերը զո՛ւր կրկին:

Այսպէս կան ինչ լճակներ
Մայր երկրում ամայի,
Որոնց ծփանքին չատեր
Կ'ըսեն ժպիտ մ'է գաղտնի:

Եղո՛ւկ, անոնք չեն ժպտիր
Ծփանքով արծաթեայ,
Այլ կ'արտասուեն մեղմալիր
Մենութեան սուգին վրայ:

ԼԵՒՈՆ ԻՍՍԱՀԱՆԵԱՆ

ԲԱՆԱԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղերը չո՛ւտ լքեցին
Լճակը արծաթէ,
Վտակ մը հոն առանձին
Արցունքնե՛ր կը յորդէ:

Լճակը հին ագաւոր
Վտակին հետ կ'ուռի,
Ցուզմունքն իր խորհրդաւոր
Կարօ՞տն է անցեալի:

Թէ ծխանք մ'է յուզմունքում
Լճակը շղարշային,

Կոծող վտակն անոր մօտ
Այլ մրն է անմեկին:

Լճակը ծուփ ծուփ կուլայ
Պլուած՝ վտակին,
Կանչելով իր հնօրեայ
Բաղերը զո՛ւր կրկին:

Այսպէս կան ինչ լճակներ
Մայր երկրում ամայի,
Որոնց ծփանքին չատեր
Կ'ըսեն ժպիտ մ'է գաղտնի:

Եղո՛ւկ, անոնք չեն ժպտիր
Ծփանքով արծաթեայ,
Այլ կ'արտասուեն մեղմալիր
Մենութեան սուգին վրայ:

ԼԵՒՈՆ ԻՍՍԱՀԱՆԵԱՆ

Աշնանային Մեղեդի

Ամբիծ լուսնի ներքեւ
Ամպերուն մէջ
Ինչ գեղեցիկ հիւսեցի
Նուրբ բառերով ոսկեղեն,
Դաշնակութեամբ կանացի:

Մեր. Պարտաճեան

Ամբիծ լուսանիւթ ըստինքի մը պէս,
Լուսինը վերէն կախուեր է նորէն,
Անպատկառօրէն պչրելով կարտես,
Ամպէ քօրսաժին թոյլ բացուած քներէն:

Շենասի գրած է եղեր՝

Իր դէմքը սեւ մաղերուն մէջէն կը
յիշեցնէ
Լուսինը, որ սեւ ամպերէն դուրս կուգայ:

Զեմ գիտեր թէ այս երկու կտորներուն ո՞ր մասը իրարու կը նմանի, ո՞ր մասը միւսը կը յիշեցնէ: Բայց գիտնալու է թէ դիմացինս խելքը գլուխը մարդ չէ:

Զիս քննադատողներ շատ են գտնուած. անոնք զիս զարմացուցած են. այս վերջինը ինձի խնդուք կը պատճառէ:

Պարոնին մէկը անգամ մը զիս կը քննադատէր, որովհետեւ տաղերս «սիրուն» կը դտնէր, «ազնուական», «անկեղծ», «անճիգ», «առանց երկունքի արտադրուած», «հաճելի ու դիւրմբռնելի», «զարիպեան» կը գտնէր, «մանաւանդ բարիզեան»(*), միշտ այդ լօչտակին բացատրութիւններովը:

Մտածելու է ուրեմն որ ուրիշ ինչ կարեւոր է բանաստեղծութիւն մը անքննադատելի դարձնելու համար: Բան մըն է կ'ըսեն. ըսածնուն լուրջ գիտակցութիւնը չունին. գրականութեան հետեւակներն են անոնք, որոնք չիմանալով, երես առնելով՝ ասոր անոր չհաւնելուն մէջ կը փնտռեն իրենց մնանկացած համբաւը:

Վերջին քննադատս ինչպէս տեսաք ուրիշ մեծ յայտնութիւն մը կ'ընէ: Բանագողութիւնս գտած է: Եւ ի՞նչ բանագողութիւն, Աստուա՛ծ: Դիւա մը բլար գտնէ, գրական չնչող նախադասութիւն մը բլար գտնէ. ի՞նչ կ'ուզէ այդ քանի մը բառերուն նմանութիւններէն: Բառ մը, յանգ մը, ածական մը կը բաւեն մեր քննադատներուն? խելապատակին մէջ բանագողութեան գաղափարը ծնցնելու համար: Անոնք կը նմանին Տէյգիլս Պրուիզաքի, որ իր ամբողջ կեանքը կ'անցընէր Դասպին, Պօսլէի և Պուալոյի գործերուն մէջէն բանագողութիւններ երեւան հանելով: Իր մեթոդը սքանչելի էր: Երբ նախորդ սերունդին պատկանող գրագէտի մը մէկ բառը կրկնուած բլար Պօսլէի մէջ, այս վերջինին խօսքը բանագողութիւն կ'բլար: Պօսլէ ըսած է. Alger, tes maisons ne sont plus qu'un amas de pierres: Պուիզաք մտքը վեր կ'առնէր ու կը գուչէր. «Ասիկա բանագողութիւն մըն է Դոռնէյլէն»: Ինչո՞ւ, որովհետեւ Դոռնէյլ իրմէ առաջ ըսած էր Avoir mal soutenu l'honneur de ma maison: Ահա ա՛յս է Պուիզաքին հռչակաւոր մեթոդը, որ թոյլ կուտայ մեզի կարծելու թէ, բացի Ադամէն ո՛չ մէկը խօսք մը ըրած է որ բանագողութիւն չբլայ:

Վերյուշումով գրուած տեղեր կան Դոռնէյլի, լը Պէլէրի, լը Գօնթի տը Լիլի, Լաֆօնթէնի և շատ մը ուրիշ հեղինակներու գործին մէջ: Վերիշումը՝ բանագողութենէն փարախներով հեռու է: Անիկա արդարանալի կողմեր ունի: Հոգեբանական երեւոյթ մըն է: Միեւնոյն տարուան մէջ հրատարակուած են Յարութիւնեանի և իմ ոտանաւորներս. միայն աղէկ չեմ յիշեր որ ե՞ս առաջ գրած եմ թէ կարօն:

Անհանդուրժելի, ապիկար կարգ մը գրողներ ունինք, ինքզինքնին դժուարըմբռնելի, խրթին, հիւանդ գրականութեան տուած միմոներ, որոնք բնականաբար բան մը չեն հասկնար առողջ գրականութենէն: Կը զարմանամ որ ինչպէ՞ս կը հանի Յարութիւնեանի թեթեւ անարուեստ բայց առողջ բանաստեղծութեան՝ ա՛յն գրողը՝ որ մինչեւ այսօր կուրօրէն կը պաշտէր ցաւագար դէմքեր միայն, որովհետեւ իր համախոհները կը սիրէին զանոնք, — նմանելով պատմական Թիթանիային որ սիրահարուած էր Պոթթոմի, իշագլուխ այդ մարդուն, առնոր համար որ Օպէրոն անոր աչքերուն վրայ «մոգական ծաղիկին հիւթը կաթեցուցած էր» և այսպէս չէր տեսներ դիմացինին հրէշութիւնը և կամ նմանելով Ֆաւաթի՝ որ իր մարմնին մէջ ունեցած

(*) Բիլզանդիոն, 1908, թիւ 3464, 3470 և 3476, խորհրդապաշտ հանճարներու երկրորդութենէն ստորագրուած:

"ԱՐԵՒԵԼՔ„ի ԹԵՐԹՕՆԸ

ՐԱՖՖԻ

ՍԱՄՈՒԷԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(105)

Բ.

ՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՂՋԱԿԷՋ

—Ես կը գամ քեզ հետ, սիրելի Վահան, ես չեմ վախենում կրակից... ես մինչեւ անգամ սիրում եմ կրակը...

Սամուէլը և ծերունի Արքակը մնացին վրանում միայնակ:

—Մագաղա՞թ են այրում, սիրելի Արքակ,—կրկնեց երիտասարդը, դառնալով դէպի ծերունին:—Այրո՛ւմ են մեր կործանուած տաճարների սուրբ կտակարանները... Այրո՛ւմ են մեր եկեղեցու գիրն ու դպրութիւնը, որ մեզ պարսկացնեն... Եւ իմ հայրը գնում է հանդիսատես լինելու, գնում է զուարճանալու մի այդպիսի չարագործութեամբ...

Եւ իրաւ, վառուող խարոյկը ամբողջապէս կազմուած էր սուրբ գրքերից: Դրանք նոյն եկեղեցիներից և նոյն վանքերից յափշտակուած գրքերն էին, որ կործանեց Մեռուժանը, որ հրդեհեց Մեռուժանը, և որոնց կրակը դեռ ևս չէր հանգել: Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ կործանեց նա քրիստոնէական տաճարները, որպէս զի նրանց տեղում ատրուշաններ հիմնէ: Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար՝ այժմ այրում էր, ոչնչացնում էր նա քրիստոնէական մատեանները, որպէս զի, նրանց փոխարէն, հայերի ձեռքը տար պարսից կրօնական գրքերը, որ հայերը պարսկերէն կարդային, պարսկերէն աղօթէին և պարսից լեզուով արտայայտէին իրանց զգացմունքները...

Սամուէլը գիտէր այդ բոլոր նախասահմանեալ մեքենայութիւնները, իսկ այժմ իւր աչքերով տեսնում էր այն անողորմ գործողութիւնները, որ պիտի հեշտացնէին պարսից արքայից արքայի նենգաւոր նպատակները իրագործելու: Դէպի գերութիւն էին վարում եկեղեցականներն, որ անաէր թողնեն թէ՛ եկեղեցին և թէ՛ նրա հօտը, որ գլխաւորութեամբ կարողանան կեղծել քրիստոնեայ ժողովուրդը: Այրում էր Սամուէլը այլ եւս համբերել չը կարողացաւ, դարձաւ դէպի ծերունին այս խօսքերով.

—Սիրելի Արքակ, ինչ որ անելու է, պէտք է անել... ժամանակը թանգ է մեզ համար... Իջեցրու վրանի վարագոյրները և ինձ միայնակ թող այստեղ: Ով որ հարցնելու լինի, կասես գլուխը ցաւում է, քնած է: Իսկ մի ժամից յետոյ կուզարկես ինձ մօտ Մալխասին:

Ծերունին տխուր մտախոհութեան մէջ վեր կացաւ, վրանի վարագոյրները ցած թողեց և խկոյն դուրս գնաց: Սամուէլը մի քանի բոպէ մնաց լուռ տատանման մէջ: Նրա քնքուշ զգացմունքները, նրա վերին ատիճանի բարի սիրտը՝ բռնանում էին խելքի և սառն մտածութեան վրայ: Մի քանի անգամ վեր առաց մագաղաթի թերթը, կամենում էր գրել, բայց դարձեալ ցած դրեց: Ձեռքը տարաւ դէպի ճակատը, որ բորբոքում էր տենդային կրակով: Աշխատում էր ամփոփել իւր յիշողութիւնները, աշխատում էր վանել ա՛յն մռայլը, ա՛յն անբացատրելի մթութիւնը, որ այդ բոպէում պատել էին նրա միտքը: Նա վեր կացաւ, փոքր ինչ յետ քաշեց վարագոյրի մի եզրը, որ լոյս լինի: Նրատեց, կրկին առաց մագաղաթեայ թերթը և գրիչը: Սկսեց դանդաղ ձեռքով գրել: Նա գրում էր, և ամեն մի բառի վրայ բոպէներով մտածում էր: Այդ նամակի ճշտութիւնից էր կախուած՝ անվրէպ կերպով նպատակին հասցնել այն սրտագին խորհուրդը, որ վազուց արդէն խմբվում էր նրա գլխում: Մի սխալ քայլ կարող էր ամեն ինչ ոչնչացնել: Նրա խորհուրդը որքան մեծ էր, նոյնքան և վտանգաւոր էր: Եւ այդ իսկ խորհրդից էր կախուած թէ՛ նրա խղճի հանգստութիւնը, և թէ՛ նրա հայր

մոգական ըմպելիին ազդեցութեան տակ ամէն կնոջ մէջ կը գտնէր իտէալ Հէլէն մը։

Շէֆիլդ ու Իզզէթի նորահանճար երգիչը բարեբախտ է դարձեալ որ ինքզինքիս ներեցի այս տողերը գրելու, քանի մը վայրկեաններ իրեն զոհելով. չէ՞ որ երբեմն մարդ փափաք կը զգայ հեգնելու դիմացինին չարժուեւեւերը, աչխարհս ամէնէն լուրջ խնդիրներուն վրայ խօսելով։

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Ֆրանսայի Երեսփ. Ժողովին առջի օրուան նիստին մէջ նկատողութեան առնուեցաւ ընկերվարական Պ. Ռուանէի ծրագիրը, որով կը հրաւիրէր կառավարութիւնը՝ օտար Պետութեանց արժեթուղթերուն Ֆրանսայի մէջ շրջաբերութեան հանուիլը չարգիլել, մինչեւ որ Խորհրդարանին ցոյց չտրուի ազգային շահերու պաշտպանութեանը համար ձեռք առնուելիք նախզգուշական միջոցները։ Պ. Ռուանէ, իր ծրագիրը պարզելով ռուսական փոխառութեան դէմ, կը յայտնէ.—«Մեզմէ միլիոններ կը պահանջուին տպականիչ պաշտօնեաներ պահելու համար։ Մեզմէ կը պահանջուի ոյժ տալ դայութեանը Զարերու ռէժիմին որ հոգեվարքը է։ Փոխառութիւնը պիտի յատկանայ ռուսական սեւ խումբերու պահպանութեան (Բոյոր նսարանններեն աղմուկ։ Ծայրագոյն ձախակողմը կը ծափահարէ)։» Պ. Ռուանէ յետոյ խօսիլ կը քննադատէ ռուսական քաղաքականութիւնը Պարսկաստանի մէջ և կ'ըսէ.—«Ֆրանսա պէտք չէ որ իր միլիառներովը ոյժ տայ այդ քաղաքականութեան։ Անոնք որ Ֆրանսայի ազդեցութեան պահպանման հոգածու են, պէտք է քուէարկեն իմ ծրագիրս։» Արտաքին գործոց նախարար Պ. Բիչոն խօսք առնելով բաւ.

«Պ. Ռուանէի խօսքերուն համար կատարուած ընդունելութիւնը պէտք եղածին չափ ցոյց կուտայ երկրին ներկայացուցիչներուն զգացումները։ Արդէն յայտարարեցի թէ կառավարութիւնը այն ատեն միայն պիտի արգելք փոխառութիւնը, երբ սահմանադրական երաշխաւորութիւններով կատարուած է։ Ռուս կառավարութիւնը սահմանադրական Տումային հետ համախորհուրդ է որ մեզմէ կը խնդրէ արգելք փոխառութիւնը Բարիզի մէջ։ Պ. Ռուանէ խօսեցաւ Ֆրանսայի ազդեցութեանը վրայ։ Այնպէս կը կարծէի թէ մեր չարը կը պահանջէր որ դաշնակից տէրութիւնը կարելի եղածին չափ զօրաւոր ըլլայ քաղաքական, մտաւորական ու տեղական տեսակէտներով։ Ռուսական դաշնակցութիւնը այսքան սերտ և օրինաւոր եղած չէր։ Փոխառութիւնը օգտակար կերպով պիտի գործածուի երկու երկիրներու ազգային շահերուն համապատասխան կերպով։ Պարսկաստանի խնդրոյն գալով, անգլերուս համաձայնութիւնը լուսաւոր երաշխաւորութիւն մըն է։ Ֆրանսա ոյժ կուտայ անգլերուս քաղաքականութեան։ Առաջուընէ շատ աւելի լաւ կերպով պիտի պաշտպանենք մեր շահերը, որոնք համերաշխ են Ռուսիոյ շահերուն։»

Պ. Ռուանէի ծրագիրը մերժուեցաւ 104ի դէմ 430 ձայնով։

ՌՈՒՍԻԱ

Կայս. Ուեքշ մը, ելմտական նախարարութեան ուղղուած, կը հաւանի 525 միլիոն ռուպլիի փոխառութեան մը՝ հրաւերին չորսուկէս տոկոսով։

—Բեղերսպուրգի Սակարանի Լրագիրը կը ծանուցանէ.—«Ռուսիոյ դաշինքին մէջ կարծիքի անհամաձայնութիւն ծագած է Պարսկաստանի մասին հետեւուելիք քաղաքականութեան նկատմամբ։ Թէհրանի ռուս դեսպան Պ. Հարդվիկ կը պահանջէ որ Ռուսիա աւելի անկախաբար գործէ. այնպէս կը նկատէ թէ անգլերուս համաձայնութիւնը վնասակար է Ռուսիոյ։ Արտաքին գործոց նախարար Պ. Իզվոլսքիի կարծիքն ալ այն է որ բացարձակապէս յարգուի համաձայնութիւնը։ Նախարարաց Խորհուրդը պիտի գումարուի այդ գործին վրայ խորհրդակցելու։

ԷՏՈՒԱՐՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Լոնտոնէն հետեւեալը կը գրեն Վիեննայի թերթի մը.— Մայրգ աղբիւրէ առնուած տեղեկութեանց նայելով, Անգլիոյ թագաւորին կողմէ յառաջիկայ գարնան Կ. Պոլիս տրուելիք այցելութիւն մը հիմնուած է այն ենթադրութեան վրայ թէ Լուսաւորա Լ. կարելի է ուղեւորութիւն մը կատարէ Միջերկրականի մէջ։ Նոյն իսկ Անգլիոյ թագաւորը եթէ նկատողութեան առնէր Կ. Պոլիս այցելելու պարագան, այս միջոցիս ոչ օք պիտի դիտնար, քանի որ Լուսաւորա Լ. սովորութիւն ունի բնաւ ակնարկութիւն չընել այն ուղեւորութեանց մասին զորս ծրագրած է բաւական հեռաւոր թուականի մը համար։ Ասոր վրայ պէտք է աւելցնել նկատառումը ընդհանուր կացութեան, որ դեռ պէտք եղածին պէս լուսաբանուած չի կրնար համարուիլ, հակառակ Թուքքիոյ և Աւստրիոյ միջեւ գոյացած համաձայնութեամբ առաջ եկած բարեբարեկամ թուլացումին. հետեւաբար մեծ տէրութեան մը վեհապետը չի կրնար այդ տեսակ ուղեւորութեանց ծրագիրներ յղանալ։ Ուստի Լուսաւորա Թագաւորին կողմէ յառաջիկայ ամսուն Կ. Պոլիս տրուելիք այցելութեան մը զրոյցները ո՛չ միայն իրական հիմ մը չունին, այլ իրենց պարզ կարգադրութիւն մըն ալ չառնելու համար կը նկատուին քաղաքական տեսակէտով։

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

Վիեննայի թերթերուն մէջ կը կարդանք.— «Աթէնքի քաղաքական շրջանակներուն մէջ բացարձակապէս անվիճելի կը նկատուի Սամոսի նման Կրետէի ինքնօրինութիւն մը տալու գաղափարը։ Ընդհանուր կերպով նոյն շրջանակներուն մէջ տիրող կարծիքին նայելով, կարելի չի նկատուիր այդ մասին նմանութիւն մը գտնել Կրետէի և Սամոսի միջեւ։ Հիմա Կրետէ կը վայելէ իրական աւելի ընդարձակ ինքնօրինութիւն մը քան թէ Սամոսի ունեցածը վերջին դէպքերէն առաջ, որոնց արդիւնքը եղաւ զեղչել մինչեւ այն ատենը տրուած ազատութիւնները։ Կրետէ տուրք չի վճարեր Բ. Դրան, մինչդեռ Սամոս հարկատու է։ Կրետէի բարձր գոմիսէրը՝ այսինքն կառավարիչը տէրութեանց կողմէ անուանուած է Ցունաստանի թագաւորին առաջարկութեամբ, կառավարիչ մը որ հեղինէն հպատակ մըն է՝ Ցունաստանի նախկին նախարարապետ և անդամ Ցունաստանի Երեսփ. Ժողովին։ Սամոսի իշխանը, ընդհակառակը, Սուլթանին կողմէ կ'անուանուի և օսմ. պաշտօնատար մըն է։ Սամոսի մէջ մինչդեռ բազմաթիւ թուրք պահակազօրքեր կան, Կրետէ բնաւ չունի։ Կրետէի ոստիկանութիւնը կը գբաղնուի հելլէն սպաներու և ենթասպաներու հրամանատարութեանը տակ. Նաեւ բաւական թիւով հելլէն պաշտօնեաներ Ցունաստանէն Կրետէ զրկուած են՝ վարչութեան և դատական պաշտօնարաններու մէջ ծառայելու համար։ Սամոսի մէջ, ընդհակառակը, բոլոր պաշտօնեաները տեղացի են և օսմ. հպատակ։ Այս իրողութեանց հանդէպ բնաւ պէտք չկայ ուրիշ ապացոյցներու՝ հաստատելու համար թէ Կրետէի իրաց արդի վիճակը փոխելով անոր տեղ Սամոսի ունեցածին նման ինքնօրինութիւն մը տալու գաղափարը չի կրնար լուրջ քննութեան մը ենթարկուիլ։»

—Բարիզի մէջ համոզում կը տիրէ թէ Անգլիա տրամադիր չերեւար միջազգային վաւերացում մը տալու Կրետէի Ազգային Ժողովին որոշման՝ կղզին Ցունաստանի կցելու մասին։

ԿՈՒՍԱ-ՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Աւստրիոյ լրագիրները հետեւեալը կը ստանան Կ. Պոլսէն.— Խորհրդարանին կուսակցութիւնները տակաւին գոյութիւն չունին։ Օսմ. Ազգային Ժողովը առայժմ երկու մասերէ կը բաղկանայ՝ այսինքն Օսմ. Միութեան ու Բառաջդիմութեան Բոմիդէն և ազատական կուսակցութիւնը՝ Սապահէտտին իշխանին վարչութեանը տակ։ Օսմ. Բոմիդէին հակառակորդներն դալով, հետզհետէ յայտնի կ'երեւայ թէ նպատակ ունի կատարեալ գերակայութիւն մը առաջ բերել թուրք տարրին համար և զանազան ցեղերու ազգայնականութիւնը վերցնել։ Ազատական կուսակցութիւնը, ընդհակառակը, սա հոգումը ունի որ Թուրքիոյ յառաջդիմութեան ու բարգաւաճման համար անհրաժեշտ օսմանեան բոլոր քաղաքացիներուն կատարեալ հաւասարութիւնը, առանց կրօնքի ու ցեղի խտրութեան։ Այս ծրագրին հետեւանքովն է որ ալպանիացի, արաբ, հայ և յոյն երեսփխանները, ինչպէս նաեւ Թուրքերու մեծամասնութիւնը միացան Սապա՝էտտին իշխանին կուսակցութեանը։

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Սելանիկէն եւրոպական թերթերու հաղորդուած լուրերու նայելով, զինուորական իշխանութիւնները հրաման ստացեր են՝ Մարդինի հրացաններ բաշխել Մանասդրի նահանգին մէկ քանի գիւղերու խլամ ժողովուրդներուն, որպէս զի երբ տեղական կռիւներ ծագին և կամ քրիստոնեայ խումբերու կողմէ յարձակում կատարուի, կարենան ինքզինքնին պաշտպանել։ Սելանիկ-Մանասդրի գծին գլխաւոր կայարանները ռադմամթերքներ և զէնքեր կը ղրկուին, յետոյ վերջանին ղրկուելու երկրին ներսերը՝ մանաւանդ հելլենական սահմանագլուխին ուղղութեամբ։ Բիչ ատենէն զինուորներու տեղափոխութիւններ ալ պիտի կատարուին միւնոյն ուղղութեամբ։

ԱՐԻՍԴԱՔԻ ՊԷՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Անցեալ օր Երեսփ. Ժողովին ներկայացուած էր Բարիզէն Արիսդաքի պէյի կողմէ երեսփոխան Իմբուլլան Էֆ.ի և Լուիֆի պէյի ուղղուած հեռագրին պարունակութիւնը սապէս է.

«Արտաքին գործոց Նախարարութենէն պահանջեցէք իմ այն նամակներս որոնք կը վերաբերին Բարիզի դեսպան Միւնիր փաշայի վանուած դրամներուն և քաղաքական սխալներուն որոնց արդիւնքը տէրութեան համար շատ ծանրակշիռ է։ Ատոնց ընթերցումովը պիտի հասկցուի թէ որքան խորդանութիւններ գործուած են բռնապետական շրջանին գործիք եղող ադեսաղի անձերը ազատելու համար։ Այդ մասին պէտք է մանրամասն քննութիւն կատարել։»

Արիսդաքի պէյ ժամանակին վաքած է Ուաշինկդընի օսմ. դեսպանի պաշտօնը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սասանեան դերդաստանէն Սամամիա-Սալթանա Սպահանի մէջ ինքզինքը Շահ հռչակեր է։ Ասդէրպատի կուսակալն ալ անկախութիւն հռչակեր և իր անունով տուրք դանձելու ձեւնարկեր է, որով Պարսկաստանի մէջ հիմա երեք վեհապետներ կան։

—Դաւրէժէն առնուած հեռագրական լուրերու նայելով ազատականները նոր յաղթանակ մըն ալ տարեր են։ Ատոնք գրաւեր են Սէհրուարը, որ Մէքալայի համբուն վրայ կը գտնուի։ Ասկէ կը հասկցուի թէ Սամէտ խան, որ Դաւրէժի վրայ յարձակում մը փորձելով պարտուած էր, կը շարունակէ փախչիլ։ Սխալ է այն լուրը թէ Դաւրէժի հիւսիսային կողմը երեք հարիւր ուղտերէ բաղկացած կարաւան մը կողոպտուած ըլլայ, վասն զի Դաւրէժէն առնուած վերջին հեռագիրներ կը ծանուցանեն թէ այդ կողմերը կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրեն։

ՅՈՒՆՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Ցունական թերթերը կ'ըսեն թէ Կ. Պոլսոյ Ցունաց Պատրիարք Տ. Եռաքիմի դէմ հոսանք մը գոյացած է Ցոյներէ ոմանց մէջ։ Բրոսոս նոյն իսկ կը ծանուցանէ թէ կիրակի օր այդ նպատակով մեծ միդնկ մը պիտի գումարուի։ Թանին այդ առթիւ կ'ըսէ.—«Եթէ Պատրիարքը ուզելու կամ չուզելու խնդիրը լոկ կրօնական շրջանակին մէջ մնայ, բնականաբար իրաւունք չունինք այդ խնդրոյն խառնուելու, բայց երբ կրօնքի անուան տակ քաղաքական նպատակներ ըլլան, այդ պարագային ամէն Օսմանցի իրաւունք ունի կարծիք յայտնելու։ Կը մտածենք որ մեր յոյն հայրենակիցները իրենց դիրը իրենց մէջ բարւոք կերպով կարգադրեն, առանց գործը այդ չաղին մէջ տանելու։»

ՍԱՅԻՏ ՓԱՇԱՅԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Նախորդ Մեծ-Եպարքոս Սայիտ փաշա կը շարունակէ հրատարակել իր յիշատակները։ Կը պատմէ տասերկու տարի առաջ սեպտ. 18ի երկուշաբթի օրը Հայերուն կողմէ Բ. Դրան առջեւ կատարուած ցոյցը՝ բարենորոգմանց ծրագրին փոփոխութիւնները չընդունելու և եւրոպական տէրութեանց ու ազգերուն օգնութիւնը հրաւիրելու նպատակով։ Սայիտ փաշա կը պատմէ նախարարներուն և նոյն տեսնի ոստիկանութեան նախարար Նազիմ փաշայի հետ կատարած խորհրդակցութիւնը, որուն հետեւանքով սա ծանուցումը յանձներ է ոստիկանութեան նախարարին՝ Սուլթան Ամէտի ու Գատրկայի հրապարակները հաւաքուած ժողովրդեան կարդալու և յետոյ Պատրիարքարանին հաղորդուելու համար։

«Հայոց Ս. Պատրիարք, երեւելիներ և ժողովուրդ,

«Կը հրամայեմ որ հիմա ցրուէք ձեր հաւաքումը։ Ս. Պատրիարքը՝ կրօնական ու քաղաքական ժողովներէն մէյմէկ անդամներու հետ, թող իսկոյն Բ. Դուռը գայ և հաղորդէ ձեր ուզածը։»

Ոստիկանութեան նախարարը Բ. Դուռը վերադառնալուն յայտարարեր է որ Ս. Պատրիարքը անհանգիստ ըլլալով չէ կրցած տեսնել, որով ժողովականներէն մէկ քանիին հետ տեսակցեր է։ Ատոնք յայտարարեր են թէ պիտի աշխատին ժողովուրդը ցրուելու, սակայն առաջարկեր են որ ժողովրդեան դէմ զէնք չգործածուի։ Ատոր վրայ ներքին գործոց նախարարին միջոցաւ նորէն գրուեր է Պատրիարքարան որ զեկոյցը հաղորդուելէն մինչեւ մէկ քառորդ ժամ ժողովը ցրուի։

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ Լտուսարտ թագաւորին գահակալութեան տարեդարձը ըլլալով, երէկ օսմ. պահականաւը դրօշներով զարդարուեցաւ և էկս օրին թնդանօթ արձակեց։

—Կայսերազուն իշխան Մէհիտ ու Վահիտ էֆ.ները, երէկ, Սէլամլըքի սարտղութենէն ետքը Սուլթանին ներկայանալով, Ռէշիտնճի Դաւրնին մահուանը առթիւ ցաւակցութիւն յայտնեցին։ Ասոր դիմանանց առաջին թարգմաններն ալ երէկ կայս. պալատ երթալով ցաւակցական այցելութիւն տուին։

—Բերայի թաղապետական ժողովին ընտրութիւնները, առջի օրը, աւարտեցաւ։ Այդ ժողովին անդամ անուանուեցան հինգ Հայեր, չորս Թուրքեր և երեք Ցոյներ։ Հայերն են՝ Մարգար Ռնճեան, Նշանտաճեան, Արամ Կէօչէեան, Պօղոս Շերպէթեան և Հանգուցեալ Յովհաննէս Թորոսեան էֆ.ները։ Թուրքերն են՝ Հաճի Իհսան պէյ, Իմէտ պէյ, Մուսթաֆա էֆ. ու Հիւսէյին Հագգը էֆ.։ Ցոյներն են՝ Լէոն Դաղանովա, Պաղչէվանօղլը և Թէոդոկի էֆ.ները։

—Երուսաղէմի Ցունաց պատրիարքական տեղապահը կը հեռագրէ Յէնէրի Պատրիարքարանին թէ Ադրիանդրիոյ Պատրիարքը Երուսաղէմ պէտք է երթայ՝ մէջտեղ մը գտնելով Երուսաղէմի Եկեղեցին աղատելու իր հիմնական դժուարին կացութենէն։

—Օսմ. կառավարութիւնը Լա Հէյի իրաւաբարական ատեանին մնայուն անդամ կարգեց ատեւարան ու հանրօրդուտ շինութեանց նախարար Գարբրիէլ էֆ. Նոբատանկեանը, դատական նախարար Մանիսսիդատէ Բէֆիգ պէյ և ծերակուտական Եորկիատիս էֆ.։

—Հանդստեան կոչուած պաշտօնեաներու, մեռած պաշտօնեաներու այրիներուն և որբերուն, ինչպէս նաեւ անպաշտօն վիճակի ամսաթոշակներուն համար նոր կանոնագիր մը պատրաստուեցաւ։

—Սելանիկի լրագիրները կ'ըսեն թէ Սանտանգի ու Բանիցա, Օսմ. Միութեան և Ցառաջդիմութեան Բոմիդէին անդամներէն մէկին հետ, կուսակալին ներկայացեր են։ Կ'ըսուի թէ Սանտաքին ոստիկանութեան դոմիսէր պիտի կարգուի։

—Ներքին գործոց նախարարութեան հասած հեռագիրներ կը ծանուցանեն թէ, կ'ըսէ Թանին, Մակեդոնիայի մէջ հրոսակները նորէն ոգեւորուած են։ Բանիցա և ընկերները գաղտնի պատրաստութիւններ կը տեսնեն։ Նոյն թերթը կը յարէ.—«Բանիցա, վերջերս, Սելանիկ գացեր է՝ իր նախորդ ընկերներէն ոմանց հետ տեսակցելու և համաձայնելու համար։ Ներքին գործոց նախարարութիւնը հրամայեց տեղւոյն ոստիկանութեան տնօրէնին հրաման ենթարկել այդ անձը։ Պուլկարական հրոսակումները զանազան տեղեր կ'երեւան և պուլկարական գիւղերու մէջ հանդարտութիւն կը կատարուի «տուրք գործի» համար։ Ատոնք կարեւորութիւն չեն տար Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ համաձայնութիւն մը գոյանալուն։ Նաեւ ստոյգ աղբիւրէ առնուած լուրերու նայելով, ատոնք օտար չեն Ֆէրտինանտի դէմ մտադրուած մահափորձին։ Եթէ պուլկար հրոսակումները նորէն գործել սկսին, կը վախցուի որ միւս ազգերն ալ փոխադարձաբար վարուին։

—Սուլթանիէ վարժարանին վերաշինութիւնը աւարտած ըլլալով, դասախօսութիւնները երկուշաբթի օրը նոր չէնքին մէջ պիտի սկսին կատարուիլ։

—Ղալաթիոյ Գոմիսիոն խանին սենեկապահութիւնը տասնրվեց տարի առաջ ըպրքատար Հիւսէյին Կալիպ էֆ.ի տրուած էր և անոր մահէն ետքն ալ հրացանակիր Արիֆ աղայի։ Մեծ-Եպարքոսը գրեր է անտառներու, հանքերու և երկրագործական Նախարարութեան, բան այնմ պէտք եղածը ի գործ դնելու համար, բայց այդ նախարարութիւնը պատասխաներ է որ այդ խանը Սանայի վարժարանին կը պատկանի, որով սենեկապահի իրաւունքն ալ անոր սեպհական է։

—Դատական պաշտօնարանին մէջ կազմուած յանձնաժողովին կողմէ պատրաստուած առեւտրական նոր օրինագիծը առեւտրական նախարարութեան զրկուած ըլլալով, կը քննուի առեւտրական Սենեկին անդամներէն երկու հոգիէ և մասնագէտներէ բաղկացած յանձնաժողովի մը կողմէ։ Օրինագիծը յետոյ պիտի ներկայացուի Երեսփ. Ժողովին ու Ծերակոյտին։

—Ներքին գործոց նախարարութիւնը գրեց բոլոր նահանգները թող չտալ պուլկար, յոյն ու սերպ քոմիտէներու միջամտութեանը, վասն զի կառավարութեան դժուարութիւն կը պատճառեն։

— Սուլթանը յայտարարեր է Մեծ-Եպարքոսին թէ Տոլմա Պաղչէի պատան մէկ մասը Երեսփ. Ժողովին պիտի յատկացնէ։ Ճարտարապետները քննութիւն կատարելով յայտարարեր են թէ նոյն պալատան մեծ սրահէն զատ միւս մասերը բաւական են Երեսփ. Ժողովին։

—Իզմիր, իմանալով որ գաւառարնակ Հայերէ ոմանք դատ պիտի բանան բնակչութեան ատեն զիրենք հարստահարող մէկ քանի պաշտօնեաներու դէմ, կ'ըսէ թէ հարկ չկայ այդ տեսակ ձեռնարկի մը, մանաւանդ այն միջոցին երբ ցեղերը պարտաւոր են սիրով կենակցիլ։ Նոյն թերթը կը յարէ թէ նիւթապէս միասուղները կրնան հատուցում պահանջել, սակայն անձնական վրէժխնդրութենէ ետ կենալու է, վասն զի այդպէս կը պահանջէ հաւաքական հայրենիքը։

— Այս առտու կամուրջին Պոլսոյ կողմը, հայուն մէկը սխալմամբ վեր կ'առնէ այն երկաթեայ ձողը որուն ընդհանրապէս պարան մը անցած է՝ երթեւեկը արգիլելու համար կամուրջը բաց եղած ատենը։ Եւ ահա անդիէն թուրք ճանապարհ մը վայրենօրէն յարձակելով հայուն վրայ, որ սկսի գլխուն զարնել «խրնդը՛ր կեալո՛ւռ» պոռալով։ Մարդիկ կը խռնուին և այդ տեսարանին վայրագութենէն ըմբոստացած՝ հրեայ մը կը հարձակի հարցնել ճանտարմային թէ ինչ իրաւամբ զարկած էր հայուն. ճանտարման, դեռ կատաղութիւնը դեռ չէր մարած, նախ յանդիմանելով վռնտել և յետոյ քովը դրուած հրացանը վերցնել կը սպառնայ՝ անով պատասխանելու համար յանդուգն հրեային. հարկ կ'ըլլայ սպականոց դիմել, ուր կը տարուի նաեւ ծեծուած հայը. կ'արձանագրուի ճանտարմային անունն ու թիւը, անոր դէմ դատ բացուելու համար։

—Երեք ծրէ ի վեր առատ ձիւն կը տեղայ Պուլկարիոյ ամէն կողմերը։

—Ձիտտէի մէջ ժանտախտ չորս հոգի մեռած ըլլալով, նոյն տեղէն ու շրջականերէն եկողներուն դէմ քարանթինա հաստատուեցաւ։

—Գարաքէօյի տարարախտ կամուրջը այս առտու նորէն հարուած մը կրեց՝ առաջուանմներէն աւելի ծանր։ Այս առտու կամուրջը բաց էր և անգլիական շոգենաւ մը կ'անցնէր։ Այդ շոգենաւը, հոսանքէն մղուելով, զարնուեցաւ կամուրջին շարժական մասին, որ մեծապէս վնասուեցաւ։ Կ'ըսուի թէ նորոգութիւնը հազիւ քսան օրէն կարելի պիտի ըլլայ աւարտել։ Անցուդարձը հիմա դադրած է, մեծ դժուարութիւն պատճառելով ձմեռուան եղանակին մէջ։ Զրոյցի մը նայելով շոգենաւին երկաթը կամուրջին շարժական մասին կառչելով, քշեր տարեր և այդ կերպով առաջ եկեր է վնասը։

—Մուշի գաւառին կառավարչի օգնական անուանուեցաւ Դարասիի գաւառին Իսարէի ժողովին նախորդ առաջին քարտուղար Դանիել Ֆիքրի էֆ.։

ՊՈԼՍՈՅ ԲԵՄԸ

Այս գիշեր Օսմ. Ազգ. Խումբը Թէրէ-Պաչիի Թաարոնին մէջ պիտի ներկայացնէ «ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ» տառամբ՝ մէկ արար, «ԴԱՍՏԻԱՐԱՆԱՆՈՒՀԻՆ» քսմէտին՝ չորս արար և «ԺԻՎԼԻԼԻՆ ԱՊՊԵՐԱԼՈՑ ԶԷ» մէկ արար։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՆԱՐ

Հ. Ց. Դաշնակցութեան նովանաւորութեամբ

Ի նպաստ Հայկական գաւառներու Քաղաքական դէպքերուն վնասուածներուն

Բեռա Մեծ Փողոց, Սենք Անթուան Եկեղեցւոյ աբարբրանին տակ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԱՏ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Ս. Ծնունդի Ճրագալոյցի իրիկունն է։ Մարմինը պահ մը մոռնալու և հոգիի ուրախութիւններով արբենալու համար եւ կեղեցի կը դիմեմ։ Դիրքերը կը կարգացուին, ու երբ կարգը Դանիէլի գիրքը կարդալու կուգայ, քահանայ մը, իր պատարագի զգեստներով, կրկանքնի սեղանին առջեւ, բեմին վրայ։ Լսեցէ՛ք թէ ինչե՞ր կը թափին այդ օրհնեալ և Աւետարանին խօսքերը յոյսերեղ բերանէն.

«Օրհնեա՛ լիրելիք, գիտէք թէ Դանիել Մարգարէին գիրքը պիտի կարդացուի հիմա. հնոցին մէջ նետուած երեք մանուկներու պատմութիւնն է սա. անոնք Աստուծոյ ապաւինեցան և կրակէն ազատեցան. անոնց պէս Աստուած ձեզ ալ փրկէ կրակէն։ Գիտէք թէ մեր սովորութիւնն է ամէն տարի Ծնունդին ու Զատկին իւղագին առնել։ Հիմա այս երեք մանուկներու սիրոյն համար հրամցնէք 50 օխա իւղ (*) գրուեցէք։ Հրամցէ՛ք, օրհնեա՛լ սիրելիք, հրամցէ՛ք»։

Ու անդիէն մարդուկին մէկը՝ որ կը կարծէ թէ հաւատքը իւղագին տալու մէջ կը կայանայ, իր նստած տեղէն կը պոռայ. «60 օխա, Տէ՛ր պապա», ու քահանան կը կրկնէ «օրհնեա՛լ սիրելիք, 60 օխա, հրամցէ՛ք»։ Կատարեալ թատերգութիւն մըն է որ կը սկսի։ Ամէն կողմէն, սիւներու քովէն, վերնատունի վարէն, հատ կամ բարակ ձայներ զիրար կը խաչաձեւեն այն գմբեթին տակ՝ ուսկից մեր աղօթքները խունկին բոյրին հետ պիտի բարձրանան երկինք։ Եւ կ'ուզեմ ականջներս խփել, որպէս զի չյաեմ ձայները որոնք կը պոռան իրարու ետեւէ «70 օխա, 80 օխա, 100 օխա, 120 օխա, 150 օխա»։ Քահանան ալ այս ամէնքը կը կրկնէ արձագանգի մը պէս ու հազիւ կը լսեմ ամէնէն վերջ. «օրհնեալ սիրելիք, 150 օխա, հրամմնցէ՛ք»։ Այն ատեն ինքզինքս կ'երեւակայեմ չուկային մէջ և լսել կը կարծեմ թէլլալին ձայնը որ կը պոռայ. «Հաարեն մեզաթ, ֆիլիմիմ եիւզ եղիյէ չրգտը, արբրաան եօ՞գ ..ռ՛ւ»։ Ու ականջներս կը բանամ ալ լսելու համար թէ արդեօք աւելցնող կա՛յ։ Բայց բարեբաղդաբար մէկը չաւելցներ, աճուրդը կը վերջանայ, քարոզը կը լմննայ և... թատրոնին վարագոյրը կ'իջնէ։

Հետեւեալ օրը Յիսուսի Ծնունդն է։ Զանգակին զողանջը գիշերէն հրաւիրած է հաւատացեալները՝ որոնք լեցուցած են եկեղեցին։ Պատարագը կ'աւարտի ու կը պատրաստուիմ ունկնդրել Զրօրինէքի տաղերուն, որոնք զգայացունց խաղերով կը վերացնեն հոգին, սակայն մեծ կ'ըլլայ յուսախաբութիւնս ինքզինքս գտնելով դարձեալ իրիկուան տեսարանին առջեւ։ Բեն. այս անգամ ձեռքը մեծ խաչ մը բռնած, բեմէն կը պոռայ. «օրհնեա՛լ սիրելիք, այս խաչին վրայ է որ մեր տէրը մեռաւ այս խաչին սիրոյն համար հրամցէք 50 օխա իւղ գրուեցէք»։ Աճուրդը վերսկսած է, իբր թէ երէկուանը չբաւէր։ Բայց ասով չլմննար։ Այս խաչին ետեւէն կ'ելլէ մէջտեղ ուրիշ մը, որուն մէջ Քրիստոսի խաչտիայտին մէկ կտորը կայ եղեր։ Ասկէ ետքը կուգայ Յովհաննէս Մկրտիչի սէրին համար գրուելու «հրամցէք»ը։ Ու ա՛լ կարգով կուգան տասերկու առաքեալները, սկսելով Պետրոսէն՝ որուն համար մեր բանիրուն քահանան կ'ըսէ. «գրուեցէ՛ք...» որովհետեւ այս այն առաքեալն է որ առաքեալներուն աւագերէցը կը կոչուի և որուն վրայ շինուած է մեր եկեղեցին, որովհետեւ Քրիստոս ըսաւ անոր. «դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեղեղեցի»։ Ա՛լ կուգամ ինքզինքս եկեղեցիին դուռը նետել։ բայց կը զգամ իմ այս բաղձանքս, լսելու համար այն բաները որոնք դեռ պիտի թափուին սեղանին վրայ ու անոր սրբութիւնը պիտի պղծեն։ Դուրսը արշալոյսը ծագած է արդէն. ժամերը կը յառաջանան. Քրիստոսի առաքեալներուն թիւը լրանալով կարգը եկած է Ս. Ստեփաննոսի։ Կը մտածեմ թէ եօթը սարկաւագներուն անուններն ալ աճուրդի հանուելէն ետքը կարգը պիտի գայ Քրիստոսի եօթանասուներկու աշակերտներուն ու անունցմէ ետքը... Պաղերուն, քանի որ ասոնք յաջորդներն են այն առաքեալին՝ որուն վրայ շինուած է եղեր մեր եկեղեցին. ու ալ վստահ եմ թէ աճուրդը իրիկուէն առաջ չպիտի լմննայ, երբ կը տեսնեմ մարդ մը՝ որ դէպի դաս յառաջանալով միւս քահանային ականջէն վար բան մը կը փսփսայ։ Փա՞ռք քեզ Աստուած։ Թաղականները լուր ղրկած են որ Տէր հայրը ա՛լ իր քարոզը՞ վերջացնէ։ Աճուրդը կը վերջանայ՝ սկսուելու համար «Զրօրինէք»ին։ Բայց իմ վրս «Զրօրինէք»ի տաղերը մտիկ ընելու ախորժակ մնացած չէ այլ եւս։ Եւ արդէն քահանաներն ալ ժողովուրդը այդ տաղերը մտիկ ընելու ճանապարհէն ազատելու փութկոտութիւնը և կամ գովելի փափկանկատութիւնն կ'ունենան, որովհետեւ գիրքը ու աւետարանը կէս կէս կը կարգացուին, աղօթքը քաղուած է արդէն։ «Ով զարմանալի»ն երբեք չրսուիր իր կարգին, «Առաքելոյ աղաւնոյ»ն կ'երգուի անկարելի մը պէս։ Ու կը վերջանայ «Զրօրինէք»ը։ Եւ գիտէ՞ք ինչու համար այս ամէնը, որովհետեւ եկեղեցին երեք կամ չորս հարիւր ղրուշ պիտի չտէր աճուրդէն։ Եթէ Քրիստոս նոյն պատուն մեր եկեղեցին մտնէր յանկարծ, գիտէ՞ք թէ ինչ պիտի ընէր։ Խարազան մը պիտի առնէր ու զայն նախ պիտի իջեցնէր այդ Տէրտէրին գլխուն, ետքը թաղականներուն, աւելի ետքը ժողովուրդին, չատ պատշաճօրէն ըսելով. «Դուրս ամէնքիդ ալ այս տեղէն, որովհետեւ դուք իմ Հօրս Տունը վաճառի տուն ըրիք»։

Եւ դեռ չպիտի նկարագրեմ այն բարբարոսային տեսարանը որ երբեմն տեղեր կը պարզուին՝ օրհնուած Ջուրը յափշտակելու ատեն։

ՅԻՊԷ

Էսկի-Շեհիր

(*) Մէկ օխա իւղի գինը 20 փարայի հաշուով։

ՏԻԳԻՐ ՍԻՐԱՆՈՑՇԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Դեկտ.ի 25ին Թիֆլիսի բօրսային դահլիճին մէջ հայոց Դրամատիկական Ընկերութեան Վարչութեան նախաձեռնութեամբ, հրաւիրուած էր ժողով մը խորհրդակցելու Տիկին Սիրանոյշի յոբելեանը տօնելու մասին։ Ներկայ էին մօտ 30 հոգի, որոնք նախ նախագահ ընտրելով Հ. Առաքելեանը և քարտուղար՝ Գ. Լեւոնեանը, տացան ժողովի զեկուցումներուն։ Նախագահը պարզելով ժողովին նպատակը, առաջարկեր է ժողովականներուն քննութեան ենթարկել, թէ ինչ ձեւով պէտք է մասնակցիլ Տիկին Սիրանոյշի յոբելեանին, որ պիտի տօնուի յունվար 24ին Բագուի մէջ։ Նախ և առաջ ժողովը կը ծանրանայ այն սկզբունքային հարցին վրայ թէ յոբելեանը մէկ տեղ պէտք է տօնել թէ մէկ քանի տեղ։ Մտքերու փոխանակութիւններէ յետոյ ժողովը այն եզրակացութեան եկաւ որ, յոբելեանը պէտք է տօնել մէկ տեղ միայն։ Եւ որովհետեւ Յոբելեարի ցանկութեամբ յոբելեանը պիտի տօնուի Բագուի մէջ, ուստի Թիֆլիսի հասարակութիւնը պէտք է մասնակցի այնտեղ։ Այնուհետեւ նախագահը կ'առաջարկէ ք

յին ջոջերը նկատելով այդ բանը՝ անցեալ օր իրենց ներկայութեանը կանչելով յիշեալ Միութեան վարչութեան անդամները, ազդարարեցին որ առ այժմ դադրին գիշերային դասախօսութիւնները և «Վաղ» անցին ազգային երգերէ։ Աղջկային ջոջերուն վրայ խօսելու առթիւ ուզեցողդ չեմ սեպեր յիշել նաև թէ վերջերս տիրող կացութեան անապահովութեան բերումով կարգ մը երիտասարդներու կողմէն թելադրութիւն եղած էր գիշերօրու հայ ազգաբնակութեան՝ ինքնապաշտպանութեան համար զէնքեր ճարել, քանի որ մեր դրացի քիւրտ եղբայրներն ալ ամբողջովին զինուած են արդէն և հակառակ մեր ակնկալութեան սահմանադրական կառավարութիւնը զիրենք զինաթափ ըրած չէ։ Եւ որովհետեւ ռամիկ ժողովուրդը իրեն եղած ամէն օգտակար թելադրութիւնները բանի տեղ չի դներ, եթէ տիպոսաւորներու ու երեւելիներու կողմէն չեն հաստատուիր անոնք, կը փութայ վերջիններէն խորհուրդ հարցնել, բայց անոնք սարսափելով—խնդիրը քիւրտ աղա-պէկերու ակնկն ալ հասած է եղեր—կը զգուշացնեն զայն այդպիսի յիմարութիւն չգործել և կասկածներու տեղի չտալ։

Ակէ առաջ գրած էի թէ տեղւոյն աղա-պէկերու միջև քրիստոնեաները ջարդելու մասին գաղտնի խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան։ Սխալ չէր այդ լուրը։ Բանդանի վերջերը բաւական ձեռնարկներ եղան ատոնց կողմէն՝ թելադրելու համար քիւրտ ամբոխը և բարբարոս ոչիրէթները որ յարձակումի պատրաստուին առ նախձիրը անխուսափելիօրէն պիտի սկսէր, եթէ քրիստոնեայ ժողովուրդը անմիջապէս կռահելով սպառնացող վտանգը՝ չբողոքէր կուսակալութեան. կուսակալը թէեւ առաջ մեծ կարեւորութիւն չտուաւ իրեն եղած յայտնութեանց, բայց յետոյ Կունտեճանս գիւղին վրայ եղած յարձակումին և հոն կատարուած սպանութիւնը հետեւանօք՝ հրամայեց տեղւոյն տեղակալին հսկողութիւն ի գործ դնել, և որպէս թէ իրողութիւնը ստուգելու համար իբր քննիչ ղրկեց հոս Տիարպէքիրցի Թէյֆի էֆէնտին և հաճի Խաչատուրը. առաջինը ռէֆաքսիոնէր մը, իսկ երկրորդը կամքէ ու կորովէ զուրկ գործիք մը պարզապէս առաջինին ձեռքը։ Ասոնք եկան սակայն ո՛չ թէ իրողութիւնը երեւան հանելու, այլ ծածկելու համար աւելի։ Բրիտանական հաբարակութեան ներկայացուցիչները՝ չատ իրաւամբ էր որ չվստահելով անոնց ուղղամտութեան Տիարպէքիր գային իրենց յայտնութիւնները ներկայացնելու, որով ազապէկերն ալ հոն կանչուեցան։ Բայց մինչ այնտեղ ժողովուրդէն բաղմաթիւ անձեր կառավարութեան դիմելով՝ կը վկայեն յիշեալ հայաջինջ ձեռնարկներու և թելադրութեանց մասին, հոս նենգամիտ քննիչները կառավարական չէնքին բակը հաւաքելով քիւրտ և քրիստոնեայ ժողովուրդները իրենց հոգեւոր պետերով՝ Սահմանադրութիւնը կը ծանուն! (հոկտ. վերջերը), և եղբայրութիւն ու հաւասարութիւն կը քարոզեն, անմիջապէս յետոյ Իպտամին հեռագրելու համար թէ Սլիվանի մասին եղած տարաձայնութիւնները սուտ են, և քրիստոնեայ ու իսլամ հաւասարապէս օգտուած Սահմանադրութեան բարիքներէն, համերաշխութեամբ ու եղբայրաբար կ'ապրին։ Այդ հեռագիրը, ինչպէս ժամանակին տեսնուեցաւ Իպտամին մէջ, ստորագրուած էր նաեւ քրիստոնեայ մէկ քանի հոգեւոր և աշխարհական անձնաւորութեանց կողմէ. բայց իրողութիւնը սա է որ ստորագրութեան համար այդ անձերուն ներկայուած հեռագիրը միայն հետեւեալ խմաստով է. «Գեանուեր էասին հոս (Սլիվանի մէջ) ալ ընդունուեցաւ. կը խոստանանք աշխատիլ անոր իրագործմանը»։ Հակառակ ամէն իրական փաստերու և այնքան կայութեանց՝ Տիարպէքիր կանչուող աղաները չպատժուեցան սակայն և ասկէ երկու շաբաթ առաջ կրկին իրենց տեղը դարձան, աւելի զօրաւոր թափով շարունակելու համար անչուտ իրենց կեղեքումները։

—Ամսոյս 12ին, ուրբաթ օրը, կազմուեցաւ հոս քիւրտ քլիպը։ Այդ առիթիւ խուռն բազմութիւն մը հաւաքուած էր մզկիթը, ուր փոքր թռով Հայեր ալ դացեր էին։ Քլիպի անդամներէն, (առ այժմ ամբողջ քիւրտ տէրէպէյներէ բաղկացած) Հաճի Ռէշիտ աղան և Պեսրի պէկի որդին Մահմուտ պէկը՝ քիւրտերէն ճառեր խօսեցան. յայտնեցին թէ այսուհետեւ հաւասարութիւնը և եղբայրութիւնը կը տիրեն և թէ իրենց կոչումն է արգիլել անիրաւութիւններն ու պաշտպան կանգնիլ արդարութեան։ Ի՞նչ կատակերգութիւն. ամբողջ գաւառի մը ժողովուրդը մերկացնել իր ստացուածքներէն, բռնութեամբ տէր դառնալ անոր հողերուն, անոր քրտինքովը հարստանալ, անոր արիւնովը յղփանալ և տակաւին պաշտպան հանդիսանալ արդարութեան. աքանչելի է սա։

Քիւրտ Քլիպ մը Տիարպէքիրի մէջ ալ կազմուած է, բայց աւելի մեծ հանդիսաւորութեամբ և ազմկայոյզ ցոյցերով. 4000է աւելի քիւրտեր չէյիներու և մօլլաներու առաջնորդութեամբ թափօր կազմած՝ շրջած են քաղաքին փողոցներուն մէջէն, անդադար աղաղակելով. «կեցցէ ազգը, կեցցէ Սուլթանը... Մենք հաւասարութիւն չենք ընդունիր, հուրիէթը կ'ուզենք»։ Այս ցոյցը մեծ վախ պատճառած է տեղւոյն քրիստոնեաներուն։

—Պէրիկի և Ղարզանի գիւղերուն մէջ Պաքրանցի և Ռաշգօթանցի քօչարները սովորական թափով դեռ կը շարունակեն գանձել Հայերէն իրենց խաթիրութեան անվերջանալի տուրքերը. այսօր ցորեն կ'ուզեն, վաղը գարի, յաջորդ օրը բամպակ, ուրիշ օր մէն ալ գրամ, վերջապէս ինչ բանի որ պէտք ունին։

Բալամօ գիւղէն՝ տեղւոյն քահանան՝ անցեալները նամակով մը հետեւեալը կը դրէր հոս իր մէկ բարեկամին. «Վիճակիս ժողովուրդը կը յուսար թէ Սահմանադրութեան շնորհիւ այս (անցնող) աշնան ապատ պիտի ըլլար Մահրան պէկին սուխրա ընելէ, սակայն ի զո՛ւր։ Բրնձի հունձքը սկսելուն պէս՝ ըստ սովորականին պարտաւորուեցաւ թողուլ իր տնական գործերը և ամբողջ ամիս մը զբաղիլ պէկին բրինձները քաղելու, կալնելու, բաբկելու և անոր ամբարները կրելու աշխատանքով, ի վարձատրութիւն ընդունելով միայն անոր ծառաներու խարազանի բիրտ հարուածները, լպիրշ հայհոյէնները և սպառնալիքները։ Անխիղճ պէկը այս տարի ալ ամէն տարիներու պէս գիւղատնտեսական բոլոր բերքերէն իր անարգար հողատէրի իրաւունքն ու տասանորդը առնելէ յետոյ՝ մչակ աշխատաւորին իրաւունքն ալ անոր հետ բաժնեց անամօթաբար։ Երեսփոխանական քուէարկութեանց համար որոշուած պաշտօնեաները՝ ժամանակին դեռ մեր ընտրական չրջանակը չմտած՝ պէկը ամէն օր նոր հրաման մը կը ղրկէր հոս, օր մը կը յանձնարարէր իրեն քուէ տալ, յաջորդ օրը՝ այսինչ մօլլային, երկու օր վերջ այսինչին, այնպէս որ ժողովուրդը չվոթութեան մէջ էր երբ պաշտօնեաները հասան. այդ միջոցին պէկին գրագիրը ամբողջ չրջանակի ժողովրդեան կողմէն փոխանորդաբար իր քուէն տուաւ Պօշաթցի մօլլայի մը և ընտրութիւնը վերջացած եղաւ։ Իրերու վիճակը այսպէս ըլլալով հանդերձ՝ կը զարմանամ որ դեռ կը կրկնուին Ազատութիւն, Հաւասարութիւն և Եղբայրութիւն ստապատիր բառերը»։

ԹՂԹԱԿԻՑ

ՎԱՆ. - ՀԱՅԱՐԱՊԵՏԸ ԵՒ ՏԵՂԱՊԱՀԻ ԽՆԴԻՐԸ.—Կարգ մը ազգ. երեսփոխաններ, Պատրիարքարանի մէջ նախընթաց օր տեղի ունեցած պաշտօնական ընդունելութենէն յետոյ հետեւեալ հանրագիրը ստորագրած և յանձնած են Բաղաք. Ժողովին նկատառմանը. — ««Իմացանք թէ Տ։ Մատթէոս Ս. Պատրիարք Հօր՝ իբրեւ ամենայն Հայոց Հայրապետ՝ ընտրութիւնը վաւերացած է Վեհ. Զարէն։ Նկատելով որ Նորին Վեհափառութիւնը անմիջապէս չի կրնար մեկնիլ դէպի Ս. Էջմիածին. նկատելով որ Ն. Վեհափառութեան առնուազն 3—4 ամիսներ իբրեւ Պատրիարք պաշտօնի վրայ մնալն անհրաժեշտ է, Ազգ. Ժողովոյ ձեռք առած կարեւոր գործերուն պատճառաւ. նկատելով որ հպատակութեան խնդիրը այնքան ղօրաւոր արգելք մը չէ առ այդ՝ օրէնսդիտական տեսակէտով, զոր պիտի պարզենք յատեսի Ազգ. Ժողովոյ։ Ուստի կը խնդրենք Տեղապահի ընտրութեան հայտնի ձեռնարկ չկատարել մինչեւ որ Ազգ. Ժողովը այս բացառիկ պարագային իր որոշումը տայ, և ներկայացնել պաշտօնապէս խնդիրը Ազգ. Ժողովին առ ի նկատառումն»։

ԱԶԳԻ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ Հոգաբարձութիւնէն բաւական թիւով անդամներ հրաժարած ըլլալով, Բաղաք. Ժողովը երէկ նիստ գումարեց և հետեւեալները ընտրեց հրաժարածներուն տեղ. Տեարք՝ Տօքթ. Գ. Ճէլալեան, Տօքթ. Աշոտ Պաշէվանլեան, Տօքթ. Կարապետ Խանճեան, Տօքթ. Մաքսուտ Շէրպէթճեան, Նշան Ղուկասեան, Միսաք Նաղլեան, Մկրտիչ Ինճէեան, Յովակիմ Աբիկեան և Լեւոն Յովհաննէսեան։

ՏՐԱԳԻԶՈՆԷՆ 14 Հայերու ստորագրութեամբ հետեւեալ հեռագիրը ուղղուած է, Եըլդրզի հացկերոյթին առթիւ. «Կարգ մը երեսփոխաններ Եըլդրզի հացկերոյթին չմասնակցելուն առթիւ գոհունակութիւն կը յայտնենք»։

ԴԵՐԱՍԱՆ ՀԱՅԻՖԵՆԵՆԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ.—Դեկտեմբերի 29ին տեղի ունեցեր է հայկական բեմի համեստ գործիչներէն մէկուն դերասան Զարէֆեանի և պատիւ ցերեկոյթը։ Այս տարի լրացած է Պ. Զարէֆեանի բեմական գործունէութեան տասնամեակը։ Ճիշդ տասը տարի առաջ Բագուի մէջ կազմակերպուած դրամատիկական խմբի առաջին ներկայացման ատեն բեմ եկաւ Պ. Զարէֆեանը չատ Հնչէն՝ անխօս ծառայի դերով։ Եւ այդ անչնչոտ դերը Պ. Զարէֆեանը կատարեց այն ատիճան շնորհալի ու ճաշակով՝ թէ իր դերին արտաքինով ու թէ յաջող ձեւերով և շարժումներով, որ անմիջապէս գրաւեց հասարակութեան և մանաւանդ քննադատներու ուշադրութիւնը, որոնց կողմէն արժանացաւ խրախուսանքի և քաջալերութեան։ Եւ Պ. Զարէֆեանը, փոխանակ չմոռանալու եւ mania grandiosa ցաւով բռնկվելու, տասը տարվայ ընթացքին մէջ իր Հանասերութեամբ, տակտիկութեամբ և եռանդագին դերասանական գործունէութեամբ իր բեմական ձիրքերը հասցուց այնպիսի կատարելագործութեան, որ այժմ Պ. Զարէֆեան մեր ռուսահայ բեմի կարող ոյժերէն մէն է և փայլուն ապագայ կը խոստանայ։

ԲԱՔՐԻԶԷՆ աղգային մը ասկէ առաջ Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միութիւնը 70,000 ֆր. տրամադրելի ըրած էր, որպէս զի յարմար առիթ մը Հայաստանի Հայերուն ի նպաստ գործածէ. այս անգամ նոյն Միութիւնը նկատելով որ այժմ Անատոլիի մէջ մեծ սով կայ և ամէնէն յարմար ժամանակն է այդ դրամը լաւագոյն կերպով գործածելու, Եգիպտոսէն նախընթաց օր մայրաքաղաքս վերադարձող՝ տօքթ. Տաղաւարեանի հետ ղրկած է 70,000 ֆր.ի չէք մը յանձնելու Վեհ. Հայրիկին։ Նոյնպէս Պօղոս Նուբար փաշայի նախագահութեամբ կազմուած նպաստաւաք յանձնաժողովը 500 ոսկի ղրկած է և քանի մը օրէն 500 ոսկի եւս պիտի ղրկէ։

ՈՒՍՍԻՍՆ. ԽՈՐՀՈՒՐԴԸ երէկ հետեւեալ խնդիրներով զբաղեցաւ։ Հինդլեան էֆ. Ս. Պատրիարք Հօր մատուցած գրովը կը յայտնէր թէ Դեկտ. 4ին կեդրոնական վարժարանի տնօրէնութեան պաշտօնին կոչուած էր երկու տարուան համար, սակայն Խնամակալութիւնը չէր յարգած կնքուած պայմանագրութիւնը, և ինչ ինչ յայտարարութիւններ կ'ընէր այս մասին։ Բաղ. Ժողովի որոշումին համաձայն այս գրութիւնը Ուսումն. Խորհուրդին յանձնուած էր։ Խորհուրդը հրաւիրեց Խնամակալութեան անդամներէն Յովհաննէս Շահնազարեանը՝ բացատրութիւն տալու համար, բայց Խնամակալութեան անդամները ներկայ չըլլալով, Շահնազարեանի գործը նոր նիստի մը համար հետաձգուեցաւ։ Ուսումնական տարեշրջանի սկիզբը Ս. Գրոց դասատուութեան համար Գ. Գրիգորեան,

Ս. ՇԹԱՅՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԱՍՏ ԶԳԵՍՏԵՂԷՆԻ ԱՄԷՆԷՆ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԱՅՍՕՐ ԵՒ ՅԱՋՈՐԴ ՕՐԵՐԸ

ԶՄԵՌՆԱՎԵՒԶԻ ԵՂԱՆԱԿԻՆ ԱՌԹԻՒ

ԴԻՒՐԱՄԱՏԶԵԼԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Խիստ զեղչուած գիներով կը ծախուին վաճառատան բոլոր ճիւղերուն մէջ

ԳԱՒԱՌԻ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ ՆԱՄԱԿԱՏԱՆ ՄԻՋՈՑԱՒ ՓՈԽԱՐԺԷՔԸ ՍՏԱՆԱԼԷ ՅԵՏՈՅ

ՎԷՍԹՕՆՈՎ ԶԳԵՍՏ Անգլ. ֆանթէզի կերպասէ	100
ՐԸՏԷՆԿՍԹՈՎ ԶԳԵՍՏ Սև չբվիօթէ	180
ԺԱՔԷԹՈՎ ԶԳԵՍՏ Մինչև մէջքը, լիագոյն և ֆանթէզի գոյներով	100
ԲԱԼԹՕ Անգլիական կերպասէ, նոր տէսէններով և միագոյն	100
ԲԱՐՏԸՍԻՒ Նոր և ընտիր տէսէններով	80
ՎԷՍԹՕՆՈՎ ԶԳԵՍՏ Պատանիներու համար, նոր ձեւով և կարուածքով, ֆանթէզի կերպասէ	60
ԲԱԼԹՕ Պատանիներու համար, անգլ. ֆանթէզի կերպասէ և ամէն գոյներով	60
ՔՕՍԹԻՒՄ ՄԱԹԼՕ Տղոց համար, ամէն տեսակէ և ամէն գոյնով	40
ԺԻԼԷ Ֆանթէզի, արանց համար, վերջին նորաձեւութեամբ	30-35
ՍԵՆԵԿԱԶԳԵՍՏ Ձոխ կերպով յարդարուած	60
ԶՈՐԶԱԿԱԼ «ԻՏԷԱԼ»	2
ՌԱՋԱՔ Աձիլման ապահով գործի	60
ՔՕՍԹԻՒՄ-ԹԱՑԵԷՕՐ Նորատի աղջկանց համար	100
ՔՕՍԹԻՒՄ-ՐԸՏԷՆԿՈԹ Կանանց համար	180
ՊԼՈՒԶ Ֆանէլայէ	20
ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐԱՐԿՈՒ Կանանց համար, անգլիական տեսակէ և երաշխաւորուած	108

ԶԳԵՍՏ Փոքր աղջկանց համար ԶԵՂՉՈՒԱԾ	20%
ՇՐՋԱԶԳԵՍՏ Ֆանթէզի չբվիօթէ	40
ԺԻԻԲՕՆ Սև ասուիէ	25
ՊՕԱ ԵՒ ՄԱՆՇՕՆ Մուչտակէ ԶԵՂՉՈՒԱԾ	25%
ՊՕԱ ԵՒ ՋԱՑԼԱՄԻ ՓԵՏՈՒՐ ԶԵՂՉՈՒԱԾ	25%
ՇԱՊԻԿ Զէֆիր գոյներով, այլազան տէսէններով	15
ՇԱՊԻԿ Ձերմակ, պարահանդէսի համար, ծալքերով և հարթ	15
ԿԵՂԾՕՁԻՒԲ Արանց և կանանց համար	12
ԲԻԺԱՄԱ Ֆանէլայէ	25
ՖԱՆԷԼԱ Զուտ անգլիական բուրդէ, միագոյն արանց համար	20
ՁԵՐՄԱԿ ՎԱՐՏԻԿ Շատ դիմացկուն	15
ԶԷՖԻՐԻ ՎԱՐՏԻԿ Ընտիր տէսէններով	10
ԳՈՒԼՊԱՑ Ֆանթէզի գոյներով և միագոյն արանց համար	3
ԳՈՒԼՊԱՑ Զուտ անգլիական բուրդէ արանց համար	6
ԳՈՒԼՊԱՑ Կանանց համար, զուտ բուրդէ և սեւ	7

ԹԱՇԿԻՆԱԿ Անգլ. պաթիսթէ, երկվեցեակը	8
ՓՈՂԿԱՊ Այլազան տէսէններով և ընտիր գոյներով	3
ԿՕՇԻԿ Տոկուն տեսակէ	60
ԳՕՏԻ Կանանց համար, չատ չիք մեծ մթերք	5
ԶԵՌՆՈՑ Պարահանդէսի համար, դիմացկուն մորթէ	9
ԶԳԱՓՈԿ Խիստ յարմար դրութեամբ	6
ԲՕՐԹ-ՇՕՍԼԻԹ Ամերիկեան դրութեամբ	5
ՁԱՐԴԱՐՈՒՆ ՍԱՆՏՐԵՐ Կանանց համար	5
ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ Թաշկինակի համար, խիստ նուրբ	7
ԱՃԱՌ «ՇԹԱՑՆ» Տուփը երեք հատ	5
ԳԼԽԱՐԿ Կանանց համար ձոխ մթերք բարիզեան նորոյթներու	25
ԳԼԽԱՐԿ Մըլօն, սեւ, չատ վայելուչ	15
ԾԱԾԿՈՑԹ Բուրդէ, խիստ նպաստաւոր գիներով	40
ՀՈՎԱՆՈՑ Կանանց համար, վայելուչ կոթերով	20
ՆԷՍԷՍԷՌ Արդուզարդի, խիստ ձոխ	50
ԿՈՃԱԿ Թեւնոցի համար	3

ՏՕՔԹ. Ա. ՈՒՆՃԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
ՔԻԹԻ, ԱԿԱՆՋԻ ՈՒ ԿՈԿՈՐԴԻ
ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Բարիզի մէջ իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով՝ ելեքտրական-նութեան ու ցարդ Պոլսոյ մէջ չգործածուած տաf օդի, տիաֆանցօսքիի, պոնցֆօսքիի, եօզօճակօսքիի ու ամէնէն նորագոյն մեթոտներով մեծ յաջողութեամբ կը դարմանէ՝ խուլութիւնը, գլխուպտոյտը ու հինցած ցաւերը, ականջի խժալը ու ականջի, քիթի, բերնի, կոկորդի ու խոչակի ամէն տեսակ հիւանդութիւնները։

Նամանաւանդ երեսի ու քիթի վրայ եղած ուռուցիկները, որոնք ցարդ անբուժելի նկատուած էին, առանց գործողութեան, կատարելապէս կը չակէ նորագոյն գործիքով մը, որուն շնորհիւ բազում այդ կարգի հիւանդներու ներսոյնոյ մէջ բժշկուած ըլլալը կ'ապացուցանէ։

Վերի ու գլխու վրայ ամէն տեսակ գործողութիւն կը կատարէ և տղոց կոկորդի նշիկները (պատէմիք) կը հանէ, առանց արիւնահոսութեան իր մասնաւոր գործիքով։

Հիւանդ կ'ընդունի մինչեւ կէս օր, Պահէքգաբու, Համիտիէ սէպիլի դէմ, Սբիկի Իմիրհան դեղարանը. իսկ կէս օրէ վերջ, իր տունը, Բերա, Շիտակ ճամբայ, Թաքսիմ, Ֆրանս. հիւանդանոցին դէմ, թիւ 41։

Հինգշաբթի օրերը կէս օրէ վերջ իր տունը դիմող ամէն հիւանդները, իսկ վկայեալ աղքատները ամէն օր ձրիաբար դարմանելու պատրաստ է։ 18—10

ՊԱՆՔ ՏԸ ՍԱԼՕՆԻՔ
BANQUE DE SALONIQUE

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 10,000,000 Ֆր.
ՎՃԱՐ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարս 1906ին
8,000,000 Ֆր.
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարս 1906ին
3,700,000 Ֆր.
ԿԵԴՐՈՆՆ Է ՍԵԼԱՆԻԿ
ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ
Դավալա, Կ. Պոլիս (Ղալաթիա և Պոլիս), Մանասթիր, Սկիւտարի ու Իզմիր։

ՊԱՆՔ ՏԸ ՍԱԼՕՆԻՔ խնամով կը կատարէ Կ. Պոլսոյ, Եւրոպական Թուրքիոյ ու Ասիոյ և Եգիպտոսի հրապարակներուն, ինչպէս նաև միւս օտար քաղաքներուն վրայ քաշուած փոխանակագիրներ։ Չէքերու հաշիւներ կը բանայ։ Արժեթղթերու վրայ փոխառութիւններ կ'ընէ։ Սակարանական հրամաններ կը կատարէ Եւրոպական բոլոր հրապարակներուն վրայ։ Չէքեր ու վարկագիրներ կը հանէ Թուրքիոյ և արտասահմանի բոլոր քաղաքներուն վրայ։ Աւանդներ կ'ընդունի ի տես վճարելի և 3, 6, 9, 12 ամսուան որոշ պայմանաժամերով։ Վերջապէս տեղական ամէն գործառնութիւններ կը լատարէ լաւագոյն պայմաններով։ Պանքը Սալօնիքի փոքր վճարումներու համար ալ ենթայաղական Մեռուկ մը ունի, չատ նպաստաւոր պայմաններով։ 50—2

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ՃԱՆՉՑՈՒԱԾ Է
Միլքմէյտ Պրէնտ Սուիս Միլքը
MILKMAID BRAND
ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՍՆՈՒՆԴՆ Է
Ամէն ան՝ոնք որ գործածած են այս կարը՝ կ'բնդունին որ
ՄԻԼՔՄԷՅՏ ՊՐԷՆՏ ՍՈՒԻՍ ՄԻԼՔԸ
ԼԱՒԱԳՈՅՆ Է ՏՂՈՑ ՀԱՄԱՐ
ԿՆՇԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԿՈՒՐԻ ՀԱՄԱՐ
ԵՒ ԱՄԷՆՈՒՆ ՕԼ ՕԳՏԱԿԱՐ
50—9

PHŒNIX ASSURANCE LD. C°
"ՖԻՆԻՔՍ,,
ESTABLISHED 1782
ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782ԻՆ
ԿԸ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.
Դրամագլուխ եւ պահեստի դրամ Անգլ. ոսկի 4,218,000
ՖԻՆԻՔՍ սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և վնասուց մէջ իր անմիջական վճարումներով։
ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ և շարժուն ստացուածք, յոյժ նպաստաւոր պայմաններով։
Ընկերութեան ճեռնաբանն եղած է
ՈՒԴԱՄԱՏՅԱՆ ԹԻՒՆ
ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՈՒՑ
Ցարդ վճարուած է առաւել քան 27000000 անգլիական ոսկի։

Ընդհանուր գործակալ Պոլսոյ և գաւառաց
Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վիթալիս խան, Պանք Օթոմանի մօտ,
Ղալաթիա։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ
ՎԻՆԸՐ ՊԱՆՔ - ՖԷՐԱՅՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ
Դրամագլուխ 130 միլիոն ֆուրոն, ամբողջովին վճարուած։
Պահեստի գումարներ 38,000,000 ֆուրոնի չափ։
ԴԻԼԵՍԻՈՐ ՊԱՑՄԱՆՆԵՐ
Վճարումները ոսկեդրամով ըլլալու են։ Ցիսուն դրուշէն վար վճարում չընդունուիր։
Վինըր Պանք-Ֆէրայն այսօր հարիւրին 3½ տոկոս կը վճարէ 1000 ոսկիէն վար գումարներու համար, իսկ անկէ աւելի գումարներու համար՝ հարիւրին 3։ Սակայն կրնայ տոկոսն սակը իջեցնել կամ տալ ցնայ տեղական լրագիրներու միջոցաւ 15 օր առաջ խաց տալէ յետոյ։
100 ոսկիէն վար գումարները կրնան ետ առնուիլ ամէն ատեն։
100 ոսկիէն վեր գումարները կրնան ետ առնուիլ գրաւորապէս ու կանխաւ ըլլալիք ազդարարութենէ մը յետոյ, հետեւեալ կերպով.

3	օր	100- 150	ոսկի	գումարի համար
6	»	151- 200	»	» »
10	»	201- 500	»	» »
15	»	501-1000	»	» «
30	»	1001 և անկէ վեր	»	»

Վինըր Պանք-Ֆէրայն իրեն կը վերապահէ պանքին դրամ ունեցողներուն հաշիւը կարգադրել, ուզած ատեն վճարելով տեսակին պարունակած գումարը։
Վինըր Պանք-Ֆէրայն խնայուած գումարը պարունակող տետրակ ալ կը բանենէ անչափահասի անունով, բայց այդ պարագային, նշանակուած խնամակալը (վէլի կամ վասի) միայն իրաւունք ունի դրամը քաշելու։ 50—37
Խնայողական Սնտուկին գաս, Վինըր Պանք-Ֆէրայն կը զբաղի նաեւ սեղանաւորական ուրիշ գործառնութիւններով։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1909 ՏԱՐՒՈՅ
Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Հիւանդանոցիս սեփական 1909 տարւոյ Ընդարձակ Օրացոյցը հրապարակ եղած է պատկերազարդ և ձոխ բովանդակութեամբ և կը ծախուի Հիւանդանոցի Գրասենեակը և բոլոր գրավաճառաց քով։
Գինն է 10 դրուշ։